

2020 թ. ԱՐՑԱԽԻ
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵԿՈՒՅՑ



ԻՐԱՁԵԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՄԻԱԿՈՐՄԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԿ



ՁԵԿՈՒՅՑԸ
ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հեղինակներ

Դանիել Իոաննիսյան

Յերմինե Գասպարյան

Վիկտորյա Անդրեասյան

Արթուր Հարությունյան

Վաղարշ Աղաբեկյան

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ-ի կողմից «Արցախի Հանրապետությունում 2020 թվականի համապետական ընտրությունների դիտորդական առաքելություն» ծրագրի շրջանակներում՝ ամփոփելով ընտրությունների դիտարկման արդյունքները:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է ՀՀ կառավարության ֆինանսական աջակցությամբ, սակայն զեկույցում տեղ գտած մտքերը պարտադիր չէ, որ համընկնեն ֆինանսավորող կողմի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	3
ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ	8
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ	10
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ	12
ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ	13
ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	15
ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ	17
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	19
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ. 1-ԻՆ ՓՈՒԼ	22
Քվեարկության նախապատրաստում	22
Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասերի շրջակայքում	25
Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում	27
Ձայների ամփոփում	40
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ. 2-ՐԴ ՓՈՒԼ	44
Քվեարկության նախապատրաստում	44
Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում	46
Ձայների ամփոփում	48
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ	50
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	53
ՄԵԴԻԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	57
Ընդհանուր պատկեր	57
Իրավական կարգավորումներ	57
Հեռուստաալիքներ	58
Առցանց լրատվամիջոցներ	71
ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ	76
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	78
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	81
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	83

ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ – Ազգային ժողով

ԱԺԿ – Արցախի ժողովրդավարական կուսակցություն

ԱՀ – Արցախի Հանրապետություն

ՉԼՄ – Չանգվածային լրատվության միջոց

ԸՕ – Ընտրական օրենսգիրք

ԻԶՄ - «Իրազեկ քաղաքացիների միավորում»

ԼՂԿԿ – Լեռնային Ղարաբաղի Կոմունիստական կուսակցություն

ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԿԸՀ – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀԺ - «Հայկական ժամանակ»

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՅԴ – Հայ Յեղափոխական դաշնակցություն

ՏԸՀ – Տարածքային ընտրական հանձնաժողով

ՔՄԴ – Քաղաքացիական միացյալ դաշինք

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» (ԻԶՍ) դիտարկել է 2020 թվականի Արցախի Հանրապետության (ԱՀ) Ազգային ժողովի (ԱԺ) և Նախագահի ընտրությունները, ինչպես նաև Նախագահի ընտրությունների երկրորդ փուլը:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին առաջադրվել էին 10 կուսակցություններ և 2 կուսակցությունների դաշինքներ: Նախագահական ընտրություններին առաջադրվել էին 14 թեկնածուներ:

Մարտի 31-ին կայացած համապետական ընտրությունների դիտորդական առաքելության մեջ ներգրավված են եղել 113 կարճաժամկետ դիտորդ, 5 իրավաբան, 9 տվյալների մուտքագրող, 6 դիտորդների համակարգող: Դիտորդների 30%-ը ԱՀ քաղաքացիներ են եղել, իսկ մյուսները՝ ՀՀ: Արցախի Հանրապետությունում ձևավորել էր 281 ընտրական տեղամաս, ևս մեկ տեղամաս ձևավորվել էր Երևանում՝ ԱՀ մշտական ներկայացուցչությունում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻԶՄ-ի կողմից դիտարկվել է 49 ընտրական տեղամաս, այդ թվում՝ Երևանի մեկ տեղամասը, բոլոր 8 Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքները, ինչպես նաև իրականացվել է դիտարկում 9 շրջիկ խմբերի միջոցով: Դիտարկված տեղամասերն ընտրվել են վիճակագրական ընտրանքով: Ընտրանքի հիմքում են եղել բնակչության թիվը, տեղամասերի քանակը և Նախորդ ընտրությունների ընթացքում տվյալ տարածքում ընտրողների մասնակցության թիվը:

Քվեարկության օրը 95 տեղամասային դիտորդների կողմից 5 առանձին դիտարկման քարտերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն.

- Հանձնաժողովի նիստի
- Ժ. 14:00-ի, 20:00-ի դրությամբ տեղամասի շրջակայքի
- Ժ. 14:00-ի, 20:00-ի դրությամբ տեղամասային կենտրոնի
- Արդյունքների հաշվարկի նիստի
- Նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփման
- ԱԺ ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ:

8 տարածքային դիտորդների կողմից հատուկ դիտարկման քարտի միջոցով հավաքվել է տեղեկատվություն բոլոր Տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի վերաբերյալ:

18 շրջիկ դիտորդների կողմից դիտարկվել են առաջադրված թեկնածուների/կուսակցությունների շտաբերը և ընդհանուր իրավիճակը տեղամասերի շրջակայքում՝ վերահսկվող քվեարկության դեպքերը բացահայտելու նպատակով: Շրջիկ խմբերի կողմից խախտումների վերաբերյալ լրացվել է 34 դիտարկման քարտ:

Ապրիլի 14-ին՝ ԱՀ Նախագահի ընտրության երկրորդ փուլին, հաշվի առնելով COVID-19 Նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված ֆորս-մաժորային իրավիճակը ՀՀ-ում և ԱՀ-ում, ԻԶՄ-ն ստիպված էր հնարավորինս սահմանափակել ՀՀ-ից ժամանած փոքրաթիվ դիտորդների մշտական ներկայությունը տեղամասերում և կիրառեց ընտրությունների դիտարկման այլընտրանքային մեթոդաբանություն: Երկրորդ փուլում առաքելության մեջ ներգրավվեց 65 դիտորդ: Վերջիններս ընտրությունների ընթացքին հետևեցին 48 տեղամասերում տեղադրված տեսահեռարձակման սարքերի միջոցով, իսկ շրջիկ դիտորդություն իրականացրեց 3 խումբ: Առաքելությունում ներգրավվեց նաև դիտորդներին աջակցող թիմ՝ բաղկացած 3 իրավաբանից, 1 տվյալներ մուտքագրողից, 4 համակարգողից և 5 մեդիա մոնիթորինգ:

48 տեղամասային դիտորդների կողմից ուղիղ հեռարձակման միջոցով դիտարկվեցին Ստեփանակերտի և շրջկենտրոնների բոլոր տեղամասերը, որոնցում տեսանկարահանող սարքեր էին տեղադրված: Դիտարկումն իրականացվեց 3 տեսակի դիտարկման քարտերի միջոցով: 48 տեղամասերից հավաքագրվեց տեղեկատվություն:

- Հանձնաժողովի նիստի

- Ժ. 10:00-ի, 12:00-ի, 14:00-ի, 16:00-ի, 18:00-ի, 20:00-ի դրությամբ տեղամասային կենտրոնի

- Արդյունքների հաշվարկի և ամփոփման վերաբերյալ:

10 դիտորդների կողմից հաշվարկվել է 10 տեղամասերի ընտրողների թիվը՝ հետագայում պաշտոնական արդյունքների հետ համեմատականներ անցկացնելու համար:

7 շրջիկ դիտորդներ դիտարկումներ են իրականացրել հիմնականում Ստեփանակերտ քաղաքում, սակայն օրվա ընթացքում այցելել և խախտումներ են արձանագրել Շուշի, Ասկերան, Մարտակերտ և Մարտունի քաղաքներում տեղակայված տեղամասերում և դրանց շրջակայքում: Օրվա վերջին շրջիկ դիտորդներն այցելել են 3 Տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ Ստեփանակերտի, Շուշիի և Ասկերանի՝ մասամբ դիտարկելով վերջիններիս աշխատանքը: Շրջիկ խմբերի կողմից խախտումների վերաբերյալ լրացվել է 20 դիտարկման քարտ:

Դիտարկման երկու փուլում էլ իրավաբանական թիմի կողմից դիտորդներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն, իսկ խախտումների վերաբերյալ ահազանգերի դեպքում իրականացվել են համապատասխան գործողություններ:

Սույն զեկույցում մշակվել և ամփոփվել է ընտրությունների 1-ին և 2-րդ փուլերի ընթացքում կիրառված դիտարկման քարտերի միջոցով հավաքագրված ողջ տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է մեդիա մշտադիտարկման մեթոդաբանությանը, ապա այն իրականացվել է ընտրությունների առաջին փուլի քարոզարշավի ողջ ընթացքում՝ փետրվարի 26-ից մարտի 29-ը, ինչպես նաև լուրջան օրը: Զանազան և որակական հետազոտության են ենթարկվել Արցախի հանրային հեռուստաալիքը՝ Արցախ TV-ն, ինչպես նաև Արցախի տարածքում հեռարձակվող հայաստանյան 6 հեռուստաալիքները («Առաջին ալիք» (Հայաստանի հանրային հեռուստաընկերություն) «5-րդ ալիք», «Արմենիա TV», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն»), որոնք ներառված են «Արցախակապի» և «Փեյս հեռուստառադիոընկերության» սոցիալական (անվճար) փաթեթներում: Հաշվարկվել է նախագահի թեկնածուներին և ԱԺ քարոզարշավին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հատկացված ժամանակը ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խոսքում, լուսաբանման տոնայնությունը:

Մշտադիտարկումն իրականացվել է Արցախ TV-ի դեպքում ժամը 16:00-ից մինչև 24:00-ն (ամբողջ եթերը), մյուսների դեպքում՝ փրայմ թայմը՝ 18:00-24:00:

Բացի հեռուստաալիքներից, մշտադիտարկման են ենթարկվել նաև արցախյան երեք լրատվամիջոցներ («Ազատ Արցախ» և «Ապառաժ» թերթերի առցանց տարբերակները, artsakhpess.am լրատվական կայքը) և հայաստանյան 5 լրատվամիջոցներ (1in.am, tert.am, news.am, «Հրապարակ» և «Հայկական ժամանակ» թերթերի առցանց տարբերակները):

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2019 թ.-ի հունիսի 22-ին ընդունվեց Արցախի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, որն ուժի մեջ պետք է մտներ 2020 թ.-ի հունվարի մեկից, ինչը ենթադրում էր, որ 2020 թ.-ին Արցախում տեղի ունենալիք համապետական ընտրություններն արդեն պետք է անցկացվեին նոր օրենսգրքով:

Արցախի Հանրապետության նախագահի ընտրության ժամանակ Արցախի ամբողջ տարածքը մեկ մեծամասնական ընտրատարածք է, իսկ նախագահին ընտրվում է բացարձակ մեծամասնական ընտրակարգով, 2-րդ փուլում հարաբերական մեծամասնական ընտրակարգով:

Ազգային ժողովը կազմված է 33 պատգամավորներից, ընտրվում են համամասնական ընտրակարգով՝ մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված թեկնածուների թվից: Ազգային ժողովի ընտրություններին անցողիկ շեմը կուսակցությունների համար 5, իսկ դաշինքների համար 7 տոկոսն է:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և 8 Տարածքային ընտրական հանձնաժողովները մշտական գործող մարմիններ են, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները ձևավորվում են ընտրությունների ժամանակ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից երեքին նշանակում է հանրապետության նախագահը, և մեկական անդամներ՝ խորհրդարանական կուսակցությունները: Այնուհետև ԿԸՀ ամեն անդամը յուրաքանչյուր տարածքային հանձնաժողովում նշանակում է մեկական անդամ, իսկ տարածքային անդամը՝ այդ տարածքի յուրաքանչյուր տեղամասային հանձնաժողովում մեկական անդամ:

Ընտրական և Քրեական օրենսգրքերով արգելվում է նախընտրական քարոզչության փուլում թեկնածուների կողմից բարեգործության իրականացումը, ինչպես նաև որևէ սուբյեկտի կողմից քարոզչության և բարեգործության համատեղումը: Քրեականացված է նաև որոշակի տեսակների վարչական ռեսուրսի չարաշահումը և ընտրակաշառք տալը, վերցնելը և դրա համար միջնորդելը:

Ընտրությունների ժամանակ Արցախի հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը պարտավոր են հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական պայմաններ:

Քվեարկությունն անցկացվում է միայն Արցախի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում: Այլ պետություններում բնակվող կամ գտնվող Արցախի Հանրապետության՝ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները համապետական ընտրություններին կարող են մասնակցել Արցախի

Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում (այդպիսին կա միայն Երևան քաղաքում):

Ընտրողների գրանցումը իրականացվում է միայն թղթային ցուցակներով, որոնք պատրաստում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանումը (իսկ զինվորականների ցուցակները՝ պաշտպանական գերատեսչությունը): Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ընտրություններից առաջ ընտրել իրենց համար գերադասելի տեղամասը և այդ մասին հայտնելով ոստիկանությանը՝ ներառվել այդ տեղամասի ընտրողների ցուցակում:

Միաժամանակ, հանրապետության նախագահի և Ազգային ժողովի քվեարկություններ անցկացվելու դեպքում յուրաքանչյուր քվեարկության համար պատրաստվում են առանձին քվեաթերթիկներ, որոնք գույներով ակնհայտորեն տարբերվում են միմյանցից: Քվեարկության ծրարներ չեն օգտագործվում:

Քվեարկության արդյունքների ամփոփումը սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և չի կարող ընդհատվել: Դիտորդները, ՉԼՄ ներկայացուցիչները և վստահված անձինք կարող են ցանկացած փուլում անարգել մուտք գործել ընտրական տեղամաս և հետևել նախապատրաստման, քվեարկության կամ ամփոփման ընթացքին, ինչպես նաև իրականացնել տեսանկարահանում և ծանոթանալ բոլոր ընտրական փաստաթղթերին:

Ընտրական ցուցակները (բացառությամբ՝ զինվորականների ցուցակների) ենթակա են հրապարակման ոստիկանության կայքում, իսկ ընտրողների ստորագրած ցուցակները առկա են տարածքային ընտրական հանձնաժողովներում և հասանելի են ծանոթության համար:

Համապետական ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել Արցախի գերագույն դատարան, իսկ ընտրական մարմինների այլ որոշումները՝ ընդհանուր իրավասության դատարան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Արցախում նախագահական վերջին ընտրությունները տեղի էին ունեցել 2012 թվականին, որոնց ժամանակ նախագահ էր ընտրվել Բակո Սահակյանը: Վերջին խորհրդարանական ընտրություններն անցկացվել էին 2015 թվականին՝ մեծամասնական ընտրակարգով, ևս 4 անգամ անցկացվել էին լրացուցիչ ընտրություններ: Արդյունքում՝ 2020 թ. համապետական ընտրություններին ընդառաջ ԱՀ Ազգային ժողովում կար 5 խմբակցությունից 32 պատգամավոր («Հայրենիք» (16 պատգամավոր), «Ժողովրդավարություն» (6 պատգամավոր), «Դաշնակցություն» (6 պատգամավոր), «Շարժում 88» (3 պատգամավոր) և «Վերածնունդ» (1 պատգամավոր)) և մեկ անկախ պատգամավոր:

2017 թ. Արցախում ընդունվել էր Նոր Սահմանադրություն, որի համաձայն 2017-2020 թթ. երկրի համար սահմանվել էր անցումային ժամանակաշրջան՝ մինչև Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը: 2017 թ. հուլիսին ԱԺ կողմից նախագահ էր ընտրվել Բակո Սահակյանը՝ երկրորդ ժամկետով:

2019 թ. հուլիսին ընդունվեց Նոր Ընտրական օրենսգիրք, որի համաձայն Հանրապետության նախագահը և Ազգային ժողովն ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից: ԱԺ ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով՝ մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներով առաջադրված ԱԺ պատգամավորների թեկնածուների թվից:

Ըստ Նոր Սահմանադրության՝ Ազգային ժողովի ընտրությունն անցկացվում է հանրապետության նախագահի ընտրությունների հետ միաժամանակ:

2018 թ. Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո Արցախում քաղաքական կյանքը զգալիորեն ակտիվացել էր, առաջ էին եկել բազմաթիվ Նոր կուսակցություններ: Արդյունքում՝ 2020 թ. համապետական ընտրություններում առաջադրված էր նախագահի 14 թեկնածու, իսկ Ազգային ժողովում՝ 10 կուսակցություն և 2 կուսակցությունների դաշինք:

Նոր կորոնավիրուսի համավարակի տարածման պայմաններում 2020 թ. ընտրություններն անցան հանրային լայն շրջանակների ճնշման տակ, որոնք պահանջում էին արտակարգ դրություն մտցնել և հետաձգել ընտրությունները: Զարոգարշավի կեսից թեկնածուների մի մասը դադարեցրեց այն, մյուսները որոշակիորեն փոխեցին ձևաչափը՝ հանդիպումներ անցկացնելով միայն բաց տարածքում կամ ընտրողների հետ շփվելով ֆեյսբուքյան ուղիղ եթերների միջոցով:

Ընտրությունների առաջին փուլի արդյունքում նախագահի թեկնածուներից ոչ մեկ չհավաքեց անհրաժեշտ ձայներ, և թեկնածուներ Արայիկ Հարությունյանն ու Մասիս Մայիլյանն անցան երկրորդ փուլ: Ապրիլի 5-ին Մասիս Մայիլյանը կոչ արեց քաղաքացիներին «Նոր կորոնավիրուսի համավարակի՝ գնալով ահագնացող վտանգի

պայմաններում չմասնակցել երկրորդ փուլի քվեարկությանը»: Փաստացի, Մայիլյանը երկրորդ փուլում քարոզարշավ չիրականացրեց, բայց և չհանեց իր թեկնածությունը:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հաշվի առնելով 2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների փորձը՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» որոշեց իրականացնել ընտրողների կրթության արշավ:

Արշավի սահմաններում պատրաստվել, սոցցանցերով տարածվել ու հեռուստատեսությամբ հեռարձակվել են 8 տեսանյութեր, որոնք ընդգծել են ընտրությունների կարևորությունը, իշխանության՝ քաղաքացուն պատկանելու սկզբունքը, իշխանության մարմինների լիազորությունները, ընտրակաշառքի անթույլատրելիությունը, քվեարկության գաղտնիության կարևորությունը և այլ հարցեր:

Տեսանյութերը հեռարձակվել են Արցախի հանրային հեռուստատեսությամբ (գումարային՝ 5000-ից ավելի վայրկյան), ինչպես նաև ունեցել են 435,500 դիտում սոցիալական ցանցերում:

Թեմաներից երկուսը՝ ընտրակաշառքի անթույլատրելիությունն ու քվեարկության գաղտնիությունը, տեղ են գտել նաև մայրաքաղաք Ստեփանակերտում և բոլոր շրջաններում փակցված թվով 39 մեծ պաստառներում (billboard-ներում):

ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՅԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ

ԱՅ ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանվում է, որ քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորինս ընդարձակ՝ հնարավորություն ընձեռելով քվեարկության ողջ ընթացքում ապահովել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց կանոնավոր աշխատանքը, ինչպես նաև հնարավորություն ընձեռի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց իրենց տեսադաշտում պահելու քվեատուփը (քվեատուփերը), քվեարկության խցիկները (պայմանով, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը), քվեարկության խցիկներից մինչև քվեատուփը (քվեատուփերն) ընկած հատվածը:

Դիտորդներն արձանագրել են քվեարկության սենյակի կահավորման հետ կապված մի շարք խնդիրներ: Ընտրությունների առաջին փուլում դիտարկված 49 տեղամասերից 10-ում նկատվել են քվեախցիկների դիրքի հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնք կարող էին քվեարկության գաղտնիության խախտման պատճառ հանդիսանալ: Վերոնշյալ դեպքերում քվեախցիկների հետևում դուռ, ազատ բաց տարածք կամ մի կողմում բաց պատուհան է եղել: 10 դեպքից 6-ի պարագայում քվեարկության գաղտնիության ապահովման համար ձեռնարկվել են լրացուցիչ միջոցներ, այդ թվում՝ դիտորդների հորդորով:

4 տեղամասերի տարածքը շատ փոքր է եղել և ոչ բավարար քվեարկության բնականոն ընթացքը և քվեասենյակում գտնվելու իրավունք ունեցող մարդկանց գործունեությունն ապահովելու և ազատ տեղաշարժվելու համար:

Չնայած տեսահեռարձակման օրենսդրական պահանջ չկա՝ ընտրություններից մի քանի օր առաջ Արցախի Հանրապետության կառավարության ֆինանսավորմամբ, Մարդու իրավունքների պաշտպանի ու Հանրային հեռուստատեսության ջանքերով և ԻԶՄ խորհրդատվական աջակցությամբ Ստեփանակերտի և շրջկենտրոնների բոլոր տեղամասերում (ընդհանուր թվով 48 տեղամաս՝ հանրապետության գրեթե 53% ընտրողների ընտրական իրավունքի իրացման դիտարկման հնարավորությամբ) տեղադրվել են տեսախցիկներ: Այս տեղամասերի քվեարկության օրվա ողջ գործընթացները հեռարձակվել են Արցախի Հանրային հեռուստատեսության YouTube-յան ալիքով: Տեսանկարահանող սարքերի տեղադրումը (բոլոր տեխնիկական թերություններով հանդերձ) տվել է պատկերի և ձայնի հեռարձակման միջոցով ընտրությունների վերահսկման լրացուցիչ հնարավորություն, ավելացրել է ընտրությունների թափանցիկությունը:

Ընտրությունների երկրորդ փուլում դիտարկումն իրականացրել ենք մեծամասամբ տեսանկարահանող սարքերի միջոցով: Ողջ օրվա ընթացքում տեսանկարահանման հետ կապված արձանագրվել են բազմաթիվ խափանումներ: Այսպես՝


- 7:00-8:00 հանձնաժողովի նիստին 48 տեղամասերից 2-ում առհասարակ հեռարձակումը չի աշխատել, իսկ մեկում եղել են խափանումներ:

- Քվեարկության ողջ ընթացքում ժամը 8:00-20:00 ընկած ժամանակահատվածում 48 տեղամասերից 22-ում եղել են տեսանկարահանման պարբերական խափանումներ, ընդ որում՝ 1/26 տեղամասում ի սկզբանե չլինելով՝ միացել է 13:20-ին, 1/20 տեղամասում անջատվել է 11:20-ին և վերականգնվել 20:00-ից հետո:

- Ժամը 20:00-ից հետո՝ ձայների հաշվարկի նիստի ընթացքում, հեռարձակման պարբերական խափանումներ են եղել 9 տեղամասերում:

Առաքելության ներկայացուցիչներն անմիջական կապի մեջ են գտնվել տեսանկարահանող սարքերի տեխնիկական խնդիրներով զբաղվող թիմի հետ, և խնդիրների մի մասն արագ կարգավորվել է:

Հարցին, թե որքանով է տեսանկարահանումը տեսանելի և լսելի դարձնում հանձնաժողովի գործողությունները, այդ թվում՝ տեսանելի՝ են արդյոք քվեախցիկները և քվեատուփը, դիտորդները պատասխանել են հետևյալ կերպ.



Տեղամասերի 60 տոկոսի պարագայում մասամբ կամ բոլորովին տեսանելի չեն եղել քվեատեսչակի մուտքը, ընտրողի երթուղին, քվեախցիկը, քվեատուփերը, գործառույթներ իրականացնող հանձնաժողովի անդամները: Դիտորդները նշել են, որ քվեախցիկների դիրքն այնպիսին է, որ կարող է բացահայտել քվեարկության գաղտնիությունը 5 տեղամասում: Եվս 5 տեղամասում տեսանկարահանող սարքերի դիտանկյունից տեսանելի չեն եղել քվեախցիկները և/կամ քվեատուփերը: Առաքելության շրջիկ դիտորդներն օրվա ընթացքում այցելել են այս տեղամասեր և հանձնաժողովի նախագահին առաջարկել են կահավորման փոփոխություններ կատարել, մեծամասամբ՝ առաջարկներն ընդունվել են:

ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԱՅ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանվում է, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը:

ԿԸՀ-ն 2020 թվականի հունվարի 16-ի N 47–Ն որոշմամբ սահմանել է այն գործողությունները, որոնք կարող են իրականացվել քվեարկության մատչելիությունն ապահովելու համար:¹

Ըստ ԱՅ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանի՝ քվեարկության նախորդ օրվա առցանց ասուլիսի ընթացքում արված հայտարարության՝ Ստեփանակերտ քաղաքի բոլոր տեղամասերն ապահովվել են թեքահարթակով, իսկ շրջաններում դա արվել է մասամբ՝ շենքային պայմանների ընձեռած հնարավորության դեպքում:² Այստեղ հարկ է նշել, որ Նույնիսկ Ստեփանակերտ քաղաքում առաջին փուլում դիտարկված 48 տեղամասերից 4-ում առաքելության դիտորդներն արձանագրել են թեքահարթակի բացակայություն կամ թեքահարթակից վերև աստիճանների առկայության կամ մուտքի դռան շատ նեղ լինելու դեպքեր:

Չնայած ԿԸՀ նախագահի նախապես արված հայտարարությանը, թե բոլոր տեղամասերն ապահովված են լինելու բրայան տառատեսակի կադապարով և խոշորացույցով, արդյունքում ընտրության օրը տեղամասերն ապահովվել են միայն խոշորացույցով:

Բացի վերոնշյալը, ԱՅ ԸՕ-ի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ համապետական ընտրությունների ժամանակ հենաշարժական հաշմանդամություն ունեցող ընտրողները կարող են ընդգրկվել այն ընտրական տեղամասի ցուցակում, որտեղ առկա են տեղաշարժման համար մատչելի պայմաններ՝ ժամանակավորապես հանվելով ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից:

Տեղամասերի մատչելիությունն առաքելության կողմից առավելապես դիտարկվել է 1-ին փուլում:

Դիտարկված տեղամասերի կեսից ավելին՝ 25 տեղամաս, տեղակայված է եղել դպրոցներում, 8-ը՝ մշակութային հաստատություններում, 7-ը՝ համայնքային ակումբներում, 3-ը՝ հանդիսությունների սրահներում, 2-ը՝ մանկապարտեզներում, 4-ը՝ այլ պետական կամ մասնավոր հաստատություններում: Տեղամասերը մեծամասամբ գտնվել են 1-ին հարկում և միայն 2-ը՝ 2-րդ հարկում:

¹ ԱՅ ԿԸՀ ԿԸՀ-ն 2020 թվականի հունվարի 16-ի N 47 –Ն որոշում <http://cecnkr.am/wp-content/uploads/2014/12/47.-դժվարություն-ունեցող.pdf>

² <https://www.facebook.com/cecnkr.am/videos/2582905208651679/>

Դիտարկված 49 տեղամասերից 13-ի մուտքն է հարթ եղել, իսկ թեքահարթակներ ունեցել են 7-ը: Յետևաբար, 29 տեղամասեր մինչև իսկ մուտքին հասնելը ոչ մատչելի են եղել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Նշված 7 թեքահարթակներից 5-ի թեքությունը եղել է 7°-ից բարձր: Դիտարկված 49 տեղամասերից 29-ի մուտքը բավարար լայն չի եղել անվասայլակով ներս մտնելու համար: Դիտորդների գնահատմամբ՝ քվեասենյակներից 27-ում է սայլակով ազատ տեղաշարժվելու հնարավորություն եղել:

Ընդհանուր առմամբ, դիտարկված 49 տեղամասերից բոլոր պարամետրերով միայն 6-ն են գնահատվել մատչելի, դրանցից 2-ի մուտքը հարթ է եղել, դռները լայն, տեղամասի մուտքի մոտ այլ խոչընդոտներ չեն եղել և տեղամասում հնարավոր է եղել ազատ տեղաշարժվել նաև սայլակով, իսկ 4-ում եղել է թեքահարթակ, տեղամասային կենտրոնի մուտքի դռները լայն են եղել, տեղամասի մուտքի մոտ այլ խոչընդոտներ չեն եղել, և տեղամասում հնարավոր է եղել ազատ տեղաշարժվել նաև սայլակով: Սակայն բոլոր 4 տեղամասերում էլ թեքահարթակի թեքությունը մեծ է եղել 7 աստիճանից:

Դիտորդները բոլոր պարամետրերով լիովին անմատչելի են գնահատել 13 տեղամաս:

Որոշ տեղամասերում հանձնաժողովի անդամները փորձել են ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրության իրավունքը՝ օրենքի ակնհայտ խախտումներով:

[Ստեփանակերտի 1/23 տեղամասում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձի քվեարկությունը հանձնաժողովի նախագահը, վստահված անձանց և դիտորդների ներկայությամբ, կազմակերպել է տեղամասի մուտքի մոտ:]

[Բերդաշենի 5/9 տեղամասում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձը, որը եկել էր առանց սայլակի՝ մեքենայով, չի կարողացել մուտք գործել տեղամաս անմատչելիության պատճառով: Միասնական հայրենիք կուսակցության վստահված անձը, որն ակնհայտորեն շահագրգռված էր այդ ընտրողի ընտրությունը կազմակերպելու հարցում, հանձնաժողովի նախագահի հետ կազմակերպել է, որ գնան մեքենայով սայլակը բերեն տնից, ինչից հետո ընտրողին սայլակով գրկած տարել են տեղամաս: Տեղամասում ընտրողը ազատ տեղաշարժվել է, բայց քվեարկել է քվեախցիկի կողքը, քանի որ սայլակով հարմար չէր քվեարկել քվեախցիկի ներսում:]

ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Արցախի օրենսդրության համաձայն, ընտրողների ցուցակները վարում է ոստիկանությունը (Անձնագրային և վիզաների վարչությունը), որը պատասխանատու է ցուցակներում կրկնությունների բացառման և քաղաքացիներին հիմնական ցուցակից լրացուցիչ ցուցակներ տեղափոխման, ինչպես նաև ցուցակների հրապարակման համար: Մասնավորապես, ցուցակները պետք է հրապարակվեն քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ ոստիկանության www.police.nkr.am կայքում: Ցուցակների մասերն են հիմնական ցուցակը, ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակը, հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակը, ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակը և ստացիոնար բուժհաստատությունների լրացուցիչ ցուցակը: Բացի այդ, Պաշտպանության նախարարությունը վարում է զորամասերում հաշվառված ընտրողների ցուցակը:

Թեպետ նախապես չէր նախատեսվում առաքելության սահմաններում դիտարկել ընտրողների ցուցակները, սակայն ընտրությունների առաջին փուլից հետո մեր ուշադրությունը գրավեց լրացուցիչ ցուցակներում առկա միևնույն անձի անվան կրկնության փաստը (քաղաքացին ներառված էր Ստեփանակերտի թիվ 1/11 և 1/13 ընտրական տեղամասերի՝ ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակներում):

Բացահայտման արդյունքում որոշվեց գննել ընտրողների բոլոր լրացուցիչ ցուցակները (համադրելով նաև հիմնական ցուցակի հետ), ինչը, սակայն, չհաջողվեց, քանի որ ի հեճուկս ԱԶ ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի պահանջների, լրացուցիչ ցուցակները հրապարակված չէին ոստիկանության կայքում: Նույն նպատակի համար տեղեկատվություն ստանալու հարցում ուղարկվեց ԱԶ ոստիկանություն, որտեղից հայտնեցին, որ ցուցակների պատճենները չեն պահպանվել, դրանց օրինակներն ամբողջությամբ տրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

Հաշվի առնելով, որ տեղամասային հանձնաժողովները, իրենց հերթին, ընտրողների լրացուցիչ ցուցակները փոխանցել են Տարածքային ընտրական հանձնաժողովներ, և դրանց էլեկտրոնային տարբերակներն այլևս չկան (եթե ոստիկանության տրամադրած տեղեկատվությունը ճիշտ է), առաքելության համար այլևս անհնար էր դիտվում դրանց ամբողջական (հիմնական ցուցակների հետ միասին) ստուգումը և այլ կրկնությունների առկայության կամ բացակայության հարցի վերջնական պարզումը: Նշված գործողությունը կարելի է անել միմիայն թվային եղանակով, քանի որ ընտրողների ցուցակներում կա շուրջ 105 հազար ընտրող, ինչը բացառում է որևէ կրկնությունների մանուալ (ոչ էլեկտրոնային) ստուգումը:

Միևնույն ժամանակ, ոստիկանությունից առաքելությանը հայտնեցին, որ ընտրությունների առաջին փուլին ստացել են ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում ներգրավվելու մասին 200 դիմում: Սակայն գտնվելու վայրի ցուցակում ներառված էր 669 ընտրող, իսկ հաշվառում չունեցող ընտրողների ցուցակում՝ 697, այնինչ անձը ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում կարող է հայտնվել միայն սեփական դիմումի համաձայն (Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդված): Դիտորդական

առաքելությունը այդպես էլ չստացավ Ընտրական օրենսգրքի հետ տարամիտող այս երևույթի որևէ հասկանալի բացատրություն:

Ընտրությունների երկրորդ փուլում արդեն ոստիկանության կայքում հրապարակվեցին ընտրողների ցուցակները (բոլոր բաղադրիչներով), ինչը հնարավորություն տվեց ստուգել կրկնությունների առկայությունը: Երկրորդ փուլի ընտրողների ցուցակների թվային ստուգման արդյունքում որևէ ընտրողի կրկնություն չբացահայտվեց, և առաքելությունը արձանագրեց, որ առաջին փուլում տեղի ունեցած խախտումները չեն կրկնվել երկրորդ փուլում:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

ԱՅ քննարկական օրենսգրքի 30-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Արցախի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում Հանրապետության նախագահի թեկնածուներին, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին):

Ընտրությունների դիտարկման համար հավատարմագրվել են 9 տեղական կազմակերպություններ և 10 միջազգային կազմակերպություններ՝ բոլորը ՀՀ-ից:

ԱՅ քննարկական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ: Դեկլարվելով Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2020 թվականի հունվարի 16-ի N 21-Ն որոշման 5-րդ կետով վերահաստատել է վերոնշյալ ժամկետը: Այդուհանդերձ, ուսումնասիրելով ԿԸՀ կայքում հրապարակված հավատարմագրման մասին որոշումները, պարզ է դառնում, որ դիտորդական առաքելություն իրականացնող մի շարք կազմակերպություններ և հենց Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լուրջ չեն վերաբերվել սահմանված ժամկետներին: Մասնավորապես, վերջնաժամկետից (մարտի 21) հետո հավատարմագրվել և/կամ ցուցակում փոփոխություններ են իրականացրել 4 կազմակերպություն: Դրանք են՝ «Իրավական կրթություն և վերահսկողություն», «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև այս շարքում են ՀՀ ԿԸՀ ներկայացուցիչները և ՀՀ ԱԺ պատգամավորները: Փոքրիկ ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտել նաև ՉԼՄ-ների՝ ժամկետից ուշ հավատարմագրվելու շուրջ 20 դեպք:

ԱՅ քննարկական օրենսգրքի, նախագահի ընտրության երկրորդ փուլ տեղի ունենալու պարագայում, դիտորդների լրացուցիչ հավատարմագրում չի նախատեսում: Ապրիլի 9-ին՝ 2-րդ փուլից ընդամենը 5 օր առաջ, ԱՅ ԿԸՀ-ի կողմից 2-րդ փուլի համար նոր դիտորդներ հավատարմագրելու կամ արդեն իսկ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու դիմումների ընդունման հայտարարություն տարածվեց: Այն հակասում էր թե՛ ԱՅ քննարկական օրենսգրքին և թե՛ ԱՅ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թ. հունվարի 16-ի N 21-Ն որոշմանը՝ բովանդակային և ժամկետների պահպանման տեսանկյունից: Ի պատասխան հարցմանը, թե ո՞րն է այդ հայտարարության օրենսդրական հիմքը՝ ԿԸՀ-ն պարզաբանեց, որ վերոնշյալ նախաձեռնությունը արդարացված են համարում Նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված իրավիճակում, ինչպես նաև այն փաստով, որ

Արցախի ընտրական օրենսդրությունն ընտրությունների 2-րդ փուլի համար նոր դիտորդների հավատարմագրման կարգավորումներ չի նախատեսում, և ելնելով Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հրապարակայնությունն ապահովելու և ընտրական գործընթացի դիտարկումն առավել հանրամատչելի դարձնելու նկատառումներից:

Արդյունքում՝ 6 կազմակերպություններ լրացումներ են կատարել իրենց նախնական ցանկերում՝

1. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» - 4 դիտորդ
2. «Քաղաքացիական աջակցության միջազգային կենտրոն» - 11 դիտորդ
3. «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ - 1 դիտորդ
4. «Հանուն ժողովրդի» ՀԿ - 31 դիտորդ
5. «Ապառաժ երիտասարդական միավորում» ՀԿ - 2 դիտորդ
6. «Իրավական կրթություն» ՀԿ - 9 դիտորդ

Ընդամենը հավատարմագրվել է ևս 58 դիտորդ:

ԱՀ նախագահի ընտրության 2-րդ փուլում Ստեփանակերտի թիվ 1 տարածքային հանձնաժողովի ենթակայության տակ գտնվող 35 տեղամասի գրանցամատյաններում դիտորդների գրանցման հատվածում առկա անունները համեմատելով հավատարմագրված դիտորդների ցանկի հետ՝ հայտնաբերել ենք, որ 22 տեղամասերում «Իրավական կրթություն» ՀԿ-ի կողմից գրանցված դիտորդները (ընդհանուր թվով 10 հոգի) հավատարմագրված չեն եղել. նրանց տվյալներն առկա չեն ԱՀ ԿԸՀ կայքում հրապարակված տվյալ կազմակերպության հավատարմագրման ցանկում: Առաքելության շրջիկ դիտորդները նկատել են, որ այդ կազմակերպության որոշ դիտորդների վկայականների վրա բացակայել են դիտորդների անուն-ազգանունները, ինչը նշանակում է, որ «Իրավական կրթություն» ՀԿ-ն օրենքի խախտումներով է դիտորդական առաքելություն իրականացրել:

1-ին փուլում ժամկետից հետո դիտորդական կազմակերպություններ հավատարմագրելու փաստը, 2-րդ փուլում նոր դիտորդների հավատարմագրման և հավատարմագրված դիտորդների ցանկերում լրացումներ, փոփոխություններ իրականացնելու նախաձեռնությունը փաստում են այն մասին, որ ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատական չէ պահպանելու ընտրական օրենսդրության պահանջները և ընթացիկ իրավիճակային խնդիրները վեր է դասում դրանցից:

ԻԲՄ-ն դիտորդներին հավատարմագրել է 2 կազմակերպությունների միջոցով՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող դիտորդներին՝ Երևանի, իսկ ԱՀ քաղաքացի հանդիսացող դիտորդներին՝ Ստեփանակերտի գրասենյակի կողմից: Հաշվի առնելով, որ հավատարմագրումը, ըստ օրենքի, իրականացվում է քվեարկության օրվանից

ամենաուշը 10 օր առաջ, իսկ դիտորդների հրաժարումներ գործնականում շատ են լինում (հատկապես՝ հրաժարման մեծ հավանականություն կար Նոր կորոնավիրուսի համավարակի տարածման պայմաններում), առաքելությունը հավատարմագրել էր 3 անգամ ավելի շատ դիտորդներ, քան իրականում մասնակցեցին դիտորդությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ. 1-ԻՆ ՓՈՒԼ

Ինչպես նշվեց, ԻԶՄ-ն 2020 թվականի մարտի 31-ին Արցախի համապետական ընտրություններին (1-ին փուլ) դիտորդական առաքելություն է իրականացրել Արցախի Հանրապետության բոլոր շրջանների 49 տեղամասերում, որոնց վիճակագրական բաշխվածությունը հնարավորություն է տալիս գնահատելու քվեարկության կազմակերպման և անցկացման ողջ ընթացքը:

Ստորև առանձին բաժիններով ամփոփված է քվեարկության օրը 49 տեղամասերում և 8 Տարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված դիտարկումների արդյունքում լրացված դիտարկման քարտերի տվյալները: Ձեկույցում առկա են նաև դիտորդների խոսքի ուղղակի մեջբերումներ՝ խախտումների դրսևորումների հստակեցման համար:


Քվեարկության Նախապատրաստում

Այս բաժնում ներկայացված են դիտարկումներն ընտրության առաջին փուլում տեղամասային ընտրական հանձնաժողովների առավոտյան նիստի (7:00-8:00) վերաբերյալ: Քվեարկության Նախապատրաստումը դիտարկելիս դիտորդներն ուսումնասիրել են նաև տեղամասի կահավորումը և մատչելիությունը:

Քվեարկության կազմակերպման առումով նշենք, որ հանձնաժողովի անդամների գործառույթները մասամբ են սահմանվել վիճակահանությամբ 4 տեղամասերում: Դրանցից 3-ի դեպքում վիճակահանություն տեղի է ունեցել, բայց ոչ բոլոր հերթափոխերի համար, կարգը չեն իմացել և իրենց խոսքերով՝ Նախատեսել են քվեարկության ընթացքում 2 ժամը մեկ իրականացնել վիճակահանություն: 1 դեպքում մասամբ են իրականացրել վիճակահանություն՝ հաշմանդամություն ունեցող հանձնաժողովի անդամին հնարավորություն ընձեռելով մշտապես գտնվել քվեատուլիի մոտ:

Առաքելության շրջիկ խմբերը, օրվա ընթացքում լինելով տարբեր տեղամասերում, այդ թվում՝ այնպիսի տեղամասերում, որոնք չեն մտել դիտարկվող հիմնական 49-ի ցանկի մեջ, հայտնաբերել են վիճակահանություն չիրականացնելու կամ մասամբ իրականացնելու 15-ից ավելի դեպք: Դրանց մի մասում հանձնաժողովն օրվա ընթացքում երկու ժամը մեկ է իրականացրել վիճակահանություն և գործառույթների փոփոխություն՝ ընդհատելով ընտրության գործընթացը:

Գծապատկեր 2. Գործառույթների սահմանում վիճակահանությամբ



[Մարտոկուն 2րջանի Թաղավարդի 5/13 տեղամասում առավոտյան ժամը 11:00-ի դրությամբ առաքելության 2րջիկ խմբերից մեկը հայտնաբերել է, որ վիճակահանություն չի իրականացվել, հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրն ամբողջ օրվա համար մեկ գործառույթ էր ստանձնել: Երբ այդ մասին 2րջիկ խումբը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին, նա պարզաբանել է, որ իրեն ասել են, թե ներքին կարգով կարող են այսպես կարգավորել այդ հարցը, և վիճակահանության կարիք չկա, սակայն չի նշել, թե ով է այդ մասին իրեն ասել: Ավելի ուշ՝ ժամը 19:00 դրությամբ, մեկ այլ 2րջիկ խումբ տվյալ տեղամասի գրանցամատյանում նկատել է, որ բոլորը նույն թերթիկներն են քաշել, վեց անգամ: Դիտորդները կասկած են հայտնել, թե արդյո՞ք վիճակահանություն իրականացվել է, հանձնաժողովի նախագահը պնդել է, որ կայացել է, ու բոլորին նույն գործառույթն է բաժին հասել:]


Դիտարկվող տեղամասերից 5-ում հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձ մուտք է գործել տեղամասային կենտրոն: Դեպքերից 3-ում այդ անձը եղել է ոստիկանը, որին հանձնաժողովի նախագահը ներս չի հրավիրել: Մի դեպքում տեղամաս է եկել թեկնածուն, որը մասնակցել է ողջ նիստին, չնայած դիտորդների հորդորով նախագահը տեղեկացրել է, որ նա այդտեղ գտնվելու իրավունք չունի, բայց, այդուհանդերձ, բավարար քայլեր չեն ձեռնարկվել նրա հեռացման համար: Մյուս երկու դեպքում եղել են անհայտ անձ և հավաքարար, որը ողջ օրվա ընթացքում պարբերաբար եկել է տեղամասը մաքրելու նպատակով, սակայն որևէ տեղ սա չի արձանագրվել:

[Ստեփանակերտի 1/32 տեղամասում չիրկիզվող պահարանի բանալին գտնվում էր դիտորդին անհայտ անձի մոտ, որը նիստի ընթացքում եկել և բացել է պահարանը: Հանձնաժողովի նախագահը պատճառաբանել է, որ մոռացել էր բանալին տանը, դրա համար է ուրիշը բերել: Գրանցամատյանում սա չի արձանագրվել:]


1/19 տեղամասում չիրկիզվող պահարանի փոխարեն բանալիով փակվող դարակ է եղել: 2 տեղամասերում վնասված է եղել քվեատուլի կափարիչը, ինչը փոխվել է նիստի ընթացում:

Դիտորդի իրավունքների խախտման 1 դեպք է գրանցվել առավոտյան նիստին, խոչընդոտել են նկարել գրանցամատյանը, հանձնաժողովի նախագահը խոստացել է ճշտել՝ կարելի՞ է նկարել, թե՞ ոչ:

Դիտորդների գնահատմամբ՝ դիտարկված տեղամասերի 16 տոկոսում հանձնաժողովի նախագահը պատշաճ չի տիրապետել իր գործառույթներին:



49 տեղամասերից 4-ում հանձնաժողովի նիստի ընթացակարգը մասամբ է պահպանվել, իսկ 3 տեղամասերում քարտուղարը կամ հանձնաժողովի այլ անդամներ իրենց վրա են վերցրել նախագահի գործառույթները:




Դիտարկված տեղամասերից մեկում խախտումների առնչությամբ իրավասու մարմիններն առհասարակ գործողություններ չեն ձեռնարկել, իսկ 4-ում մասամբ են ձեռնարկել:

Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասերի շրջակայքում

2020 թ. մարտի 31-ին ժամը 8:00-ից 20:00-ն դիտորդները հետևել են նաև դիտարկվող 49 տեղամասերի շրջակայքին: Ըստ այդ դիտարկումների, արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Ընտրողներին որևէ թեկնածուի, կուսակցության/դաշինքի օգտին կողմնորոշող միջոցառումներ եղել են դիտարկված տեղամասերից 13-ում:



Այդ թվում.

- 7 տեղամասերի շրջակայքում Արայիկ Հարությունյանի օգտին
- 3 տեղամասերի շրջակայքում Աշոտ Ղուկյանի օգտին
- 2 տեղամասերի շրջակայքում Մասիս Մայիլյանի օգտին
- 1-ական տեղամասի շրջակայքում Հայկ Խանումյանի, Աշոտ Դադայանի, Վիտալի Բալասանյանի օգտին
- 5 տեղամասերի շրջակայքում «Ազատ Հայրենիք – ԶՄԴ» կուսակցությունների դաշինքի օգտին
- 2-ական տեղամասերի շրջակայքում ՀՀԴ և «Միասնական հայրենիք» կուսակցությունների օգտին
- 1-ական տեղամասի շրջակայքում «Անկախության սերունդ», «Ազգային վերածնունդ», Արցախի ժողովրդական և Արցախի պահպանողական կուսակցությունների օգտին:

Դիտարկումներից պարզ է դառնում, որ մեծամասամբ խոսքը գնում է այս կամ այն կերպ տեղակայվող տպագիր նյութերի մասին, որոնք որոշ դեպքերում օրվա

ընթացքում հեռացվում էին: Փակցված պաստառներ/տպագիր քարոզչանյութեր 7 տեղամասերի շրջակայքում նկատել են նաև առաքելության շրջիկ դիտորդները, ընդ որում՝ Մասիս Մայիլյանի օգտին՝ 1, Արայիկ Հարությունյանի՝ 6, «Ազատ Հայրենիք – ԶԽԴ» դաշինքի, «Միասնական հայրենիք» կուսակցության և ՀՀԴ-ի օգտին 1-ական դեպք: Ընտրության ողջ օրը տարբեր բնակավայրերում առաքելության դիտորդներն ամենաշատը նկատել են մեքենաների վրա փակցրած «N6»՝ Արայիկ Հարությունյանի քարոզչանյութը:

Մարտունու շրջանի 5/30 տեղամասի շրջակայքում շրջիկ դիտորդներն արձանագրել են այսպիսի դեպք. *«Քաղաքացին ընտրատեղամասի դիմաց հորդորում էր, որ ընտրողները քվեարկեն Վիտալի Բալասանյանի օգտին, շրջիկ խումբը տեղեկացրել է այդ մասին ոստիկանին: Մինչ ոստիկանի գործողությունները, սակայն, տվյալ անձը հեռացել է՝ լսելով դիտորդների զրույցը ոստիկանի հետ»:*


Դիտարկված տեղամասերի շրջակայքում ընտրակաշառքի բաժանման դեպքեր առաքելության դիտորդները չեն նկատել:

Դիտարկված տեղամասերից 4-ի շրջակայքում (8%) դիտորդները նկատել են միևնույն մեքենաներով կամ միկրոավտոբուսով ընտրողներին տեղամաս տեղափոխելու դեպքեր, որոշներում դրանք պարբերական բնույթ են կրել:

[8/31 տեղամասում գյուղապետը, ավագանու անդամ և մեկ ոստիկան պարբերաբար ընտրողներ են տեղափոխել:]

[6/1 տեղամասում ընտրողների կազմակերպված պարբերական տեղափոխությունն իրականացվել է Արայիկ Հարությունյանի աջակիցների կողմից:]

Տեղամասերի շրջակայքում մարդկանց կուտակումներն առաջացել են թե՛ ընտրողների հերթերի գոյացման՝ կորոնավիրուսային իրավիճակով պայմանավորված ընտրողներին փոքր խմբերով տեղամաս թողնելու պատճառով, թե՛ քվեարկելուց հետո չհեռանալու կամ ընտրող չհանդիսացող անձանց կողմից տեղամասերի շրջակայքում գտնվելու հետևանքով:




Ընդ որում, դեպքերի շուրջ 1/2-ում կուտակումները հաճախակի կամ մշտական բնույթ են կրել: Դեպքերի մոտ մեկ երրորդի պարագայում կուտակումները համայնքի ղեկավարի և/կամ թեկնածուների վստահված անձանց (առավելապես Արայիկ

Հարությունյանի) մասնակցությամբ են եղել: Որոշ դեպքերում կուտակումներն ստեղծում էին ուղղորդման ռիսկեր, սակայն ծառայությունն իրականացնող ոստիկանի միջնորդությամբ դրանք վերացվում էին: Նշենք, որ ոստիկանության ծառայողները գործողություններ էին ձեռնարկում հիմնականում հանձնաժողովի նախագահի հորդորից հետո, նախագահն էլ, հիմնականում, դիտորդի հորդորից հետո:

8 ընտրատեղամասերի շրջակայքում 50 մետր շառավղով տարածքում և դրանից դուրս մարդկանց և մեքենաների կուտակումների հանդիպել են նաև առաքելության շրջիկ դիտորդները: Դրանք կապված են եղել ինչպես համավարակով պայմանավորված անհատական պաշտպանիչ միջոցների՝ դրսում բաժանելու, տվյալ ընտրատեղամասում զինծառայողների և ընտանիքներով քվեարկելու գալու, այնպես էլ տարածքում խանութի կամ շտաբի առկայության հետ:

[Ավետարանոցի 2/5 տեղամասի ամբողջ շրջակայքում մարդակային և մեքենաների կուտակում էր: «Միասնական Հայրենիք» կուսակցության շտաբը գտնվում էր ընտրատեղամասի մոտ, որտեղ մտնում և դուրս էին գալիս ընտրողները: Նկատելով շրջիկ խմբին՝ շտաբն անմիջապես փակվել է, և ոստիկանի միջամտությամբ ցրվել են մարդկային կուտակումները, բայց ոչ մեքենաների:]


Դիտարկված տեղամասերի միայն 73%-ում են իրավասու մարմիններն արձանագրված բոլոր խախտումները վերացնելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկել, սակայն հիմնականում ոչ սեփական նախաձեռնությամբ: Իսկ 27%-ում կամ չեն ձեռնարկել, կամ այդ գործողությունները բավարար չեն եղել խախտումների կանխարգելման, վերացման կամ արձանագրման տեսանկյունից:



Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում

2020 թ. մարտի 31-ին՝ Արցախի համապետական ընտրությունների առաջին փուլին, ժամը 8:00-ից 20:00-ն դիտորդները մշտապես գտնվել և դիտարկել են իրավիճակը և խախտումները 49 տեղամասերի ներսում: Ըստ այդ դիտարկումների, արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Գծապատկեր 8. Ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձ գտնվել է տեղամասում




19 տեղամասերում գրանցվել է այդտեղ ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց գտնվելու 22 դեպք, որոնք բաշխվել են հետևյալ կերպ.

Դեպքերի մեծ մասում մարդիկ տեղեկացված չեն եղել, որ չեն կարող ներկա գտնվել, և չեն կարևորել այդ պահանջը:

[Շուշիի 7/2 տեղամասում Արցախի ԱԺ պատգամավորի թեկնածու Մետաքսե Հակոբյանը («Արդարություն» կուսակցություն) պնդում էր, որ կարող է ներկա գտնվել տեղամասում:]

Գծապատկեր 9. Ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձ գտնվել է տեղամասում



[Ճարտարի 5/4 տեղամասում ԱԺ պատգամավորի թեկնածու Ապրես Սերժիկի Մարգարյանը մուտք է գործել տեղամաս, սակայն այդ տեղամասի ընտրող չի եղել:]

[Ստեփանակերտի 1/28 տեղամաս նախագահի թեկնածու Նելսիկ Պողոսյանն էր եկել, ինչ-որ հարցեր է սկսել տալ տեսախցիկների ուղեկցությամբ: Դիտորդներն ասել են հանձնաժողովի նախագահին, որ թեկնածուն իրավունք չունի այնտեղ գտնվել, սակայն հանձնաժողովի նախագահը դիտորդներին ասել է, որ իրավունք ունի ներկա գտնվելու ու ինչ-որ թուղթ է ցույց տվել: Քարտուղարը դիտորդներին տեղեկացրել է, որ գրանցել է նրա այցը գրանցամատյանում:]

[Ստեփանակերտի 1/32 տեղամաս. նախագահի թեկնածու Աշոտ Դադայանը մտել է տեղամաս, ստուգել է քվեատուլի կնիքը: Քվեատուլի կնքված թուղթն անընդհատ ընկնելիս է եղել սոսնձի անորակության պատճառով: Նախագահը բացատրել է իրադրությունը և թեկնածուին դուրս է հրավիրել:]


Ի դեպ, Ստեփանակերտի 1/7, 1/12 և 1/29 տեղամասերում ևս առաքելության շրջիկ դիտորդներն արձանագրել են, որ քվեատուլիդ պատշաճ կնքված չէ:

Որոշ տեղամասերում շրջիկ դիտորդները նկատել են, որ գրանցամատյանում միևնույն թեկնածուի/կուսակցության կամ դիտորդական առաքելության՝ սահմանված թվից ավելի ներկայացուցիչներ են գրանցված: Դեպքերի մեծ մասում այդ անձինք արդեն հեռացած են եղել տեղամասից, սակայն գրանցամատյանում բացակայել են ելքի ժամերը:

4 դեպքում ընտրողը անձը հաստատող փաստաթղթի փոխարեն այլ փաստաթղթով է ներկայացել, հանձնաժողովը արգելել է քվեարկել: 2 դեպքում ընտրողը եղել է այլ անձի անձնագրով և փորձել քվեարկել ընտանիքի անդամի կամ հարևանի փոխարեն, սակայն դեպքերը կանխվել են:

Դիտարկված 49 տեղամասերի 82%-ում ընտրացուցակների հետ կապված խնդիրներ չեն եղել: Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ արձանագրվել են 9 տեղամասերում: Ընդ որում, արձանագրված դեպքերը բաշխվել են հետևյալ կերպ.

Անձանց անվան բացակայության դեպքերից 10-ը գրանցվել են Երևան քաղաքում ձևավորված Ե/1 տեղամասում, ընտրողները նախապես չեն գրանցվել, իսկ ընտրությունների օրը ներկայացել են տեղամաս ընտրելու: Այլ անձի փոխարեն ստորագրությունների դեպքերից երկուսը եղել են հենց տեղում նույն ընտանիքի անդամների՝ միմյանց փոխարեն ստորագրելու, մյուսը տեսողական խնդիրներ




ուկնեցող անծի կողմից ներքևի վանդակում ստորագրելու դեպք: Սակայն երրորդ դեպքում:

[Ընտրողը, իր անվան դիմաց ընտրողների ցուցակում արդեն ստորագրություն տեսնելով, հեռացել է տեղամասից՝ առանց ընտրելու, և այլեւս չի վերադարձել:]

[Չարեքտարի 6/15 ընտրատեղամասի՝ դրսում փակցված ընտրողների ցուցակները հին են եղել, թիվը տարբերվել է 3 ընտրողի տվյալներով: Նկատելուց հետո փոխել են:]

Դիտորդները նկատել են կնքված քվեաթերթիկը տեղամասից դուրս հանելու 3 փորձ: Երկու դեպքում այդ փորձը կապված է եղել ընդամենը դրսից գրիչ ստանալու և հետո քվեարկելու հետ: Մի դեպքում քաղաքացին նկարել է իր քվեաթերթիկը, իսկ երբ փորձել են միջամտել, քաղաքացին փորձել է դուրս հանել քվեաթերթիկները, և երբ նախագահը չի թողել, քաղաքացին պատռել է քվեաթերթիկն ու դուրս եկել: Դեպքի կապակցությամբ արձանագրություն է կազմվել:

Ընտրողների ստորագրած ցուցակին ծանոթանալու և/կամ չքվեարկած ընտրողների մասին տեղեկություններն այլ անձանց փոխանցելու դեպքեր գրանցվել են 5 տեղամասերում:




Արձանագրված դեպքերում ներգրավված են եղել հանձնաժողովի նախագահ (1 դեպք), հանձնաժողովի անդամներ (3 դեպք), վստահված անձ (2 դեպք), դիտորդ (1 դեպք): Դիտորդի դեպքում առաքելության դիտորդը նշել է, որ ծանոթանում էր ցուցակներին, սակայն տեղեկությունների փոխանցման փորձ չի արձանագրվել:

[Միջնավանի 8/5 տեղամասում հանձնաժողովի նախագահը, որը վերցրել էր ստորագրված ցուցակների անունները, ուղարկել է ինչ-որ մեկին կանաչ ֆորդ մեքենայով, և այդ մարդկանց բերել են քվեարկելու:]

Բացի ցուցակներին ծանոթանալը, եղել են վստահված անձինք, որոնք ունեցել են իրենց ցուցակները, օրինակ՝

[Ավետարանոցի 2/5 տեղամասում «Միասնական հայրենիք» կուսակցության վստահված անձն անուններ է գրել նոթատետրում, դիմացը պլյուսներ դրել, օրվա երկրորդ կեսին նույն նոթատետրը եղել է նրան փոխարինած վստահված անձի մոտ, որը շարունակել է այդ «աշխատանքը»:]

13 տեղամասերում նկատվել են դեպքեր, երբ մեկից ավելի անձինք մտել են քվեարկության սենյակ, ընդ որում՝ առանց գրանցվելու որպես օգնող անձ:




Դիտորդների դիտարկմամբ՝ դեպքերի գերակշիռ մեծամասնության պարագայում այդ անձինք ընտանիքի անդամներ կամ հարազատներ են եղել: Արձանագրված դեպքերը, դիտորդների գնահատմամբ, կապված են չիմացության հետ և միայն 1/32 և 1/16 տեղամասերում են ավելի շուտ վերահսկողական բնույթ կրել: Ընդ որում, 1/32 տեղամասում այդ դեպքերը բազմաթիվ են եղել:

2 տեղամասերում դիտորդները նշել են, որ եղել են դեպքեր, երբ օգնողի տվյալները չգրանցվեն գրանցամատյանում:

[Մարտունու շրջանի Շեխերի 5/30 տեղամասում առաքելության շրջիկ խմբին քվեասենյակում գտնվող 2ԼՄ ներկայացուցիչը և վստահված անձինք պատմել են, որ օգնողը, մեկ անգամ գրանցվելով, օգնել է երեք անձի, ինչպես նաև հուշել է, թե ում պետք է ընտրեն: Այս առիթով մինչ խմբի ժամանելը ոչ մի արձանագրություն չի կազմվել, սակայն խմբի հորդորով հանձնաժողովի նախագահը կազմել է արձանագրություն:]

Օրվա ավարտին առաքելության դիտորդներն արձանագրել են, որ դիտարկված 49 տեղամասերում ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող ընտրողների թիվը, ըստ գրանցամատյանի, 700-ից ավել է եղել, ընդ որում, այդ թիվը որոշ տեղամասերում հատկապես մեծ է եղել: Օրինակ՝ Ճարտարի 5/4 տեղամասում գրանցվել է 69 օգնելու դեպք, Բերդաշենի 5/9 տեղամասում՝ 55, Տումիի 3/32 տեղամասում՝ 51, Տողի 3/36 տեղամասում՝ 36, Ասկերանի 2/1 տեղամասում՝ 34:

Գծապատկեր 13. Ընտրողների կողմից քվեաթերթիկները քվեախցիկներից դուրս լրացնելու կամ ծալելու դեպքեր




Խախտումներից, թերևս, ամենահաճախը եղել են քվեաթերթիկները քվեախցիկից դուրս լրացնելու կամ ծալելու դեպքերը: Դիտարկված տեղամասերի 86%-ում նկատվել են այդպիսի դեպքեր, ընդ որում, դրանց կեսում դեպքերը կրել են հաճախակի բնույթ: Իսկ ընդհանուր առմամբ, գրանցվել է շուրջ 700 դեպք, և հիմնականում եղել է տարեցների կողմից:

[Ասկերանի 2/1 տեղամաս. քվեարկությունն իրականացվում էր քվեախցիկում, սակայն ծալելու պրոցեսը՝ քվեախցիկից դուրս: Այս պրոցեսը երկար էր տևում և տեսանելի էր այլոց համար: Հանձնաժողովի նախագահը, երբ տեսնում էր, որ քվեախցիկում արդեն այլ ընտրող է, միջամտում էր՝ վերցնում ընտրողի ձեռքից քվեաթերթիկը, ծալում, ապա նոր վերադարձնում ընտրողին:]

9 տեղամասերում նկատվել է ընտրողների կողմից սեփական քվեաթերթիկը լուսանկարելու, ընդհանուր առմամբ, 13 դեպք: Նշված դեպքերի 4-ի պարագայում ներկա գտնվող անձանց միջամտությամբ լուսանկարները ջնջվել են ընտրողների հեռախոսներից, և կազմվել է արձանագրություն:

[Ստեփանակերտի 1/35 տեղամաս այցելած Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը զգուշացել է, որ ուշադիր լինեն քվեաթերթիկը նկարելու փորձերի առնչությամբ, որովհետև այլ ընտրատեղամասերում նմանատիպ փորձեր են եղել:]


Գծապատկեր 14. Ընտրողների կողմից իրենց քվեաթերթիկները լուսանկարելու դեպքեր



Լուսանկարելու դեպքերի հանդիպել են նաև առաքելության շրջիկ խմբերը և պարզել, որ այդ դեպքերը միշտ չէ, որ արձանագրվել են:

[Ստեփանակերտի 1/22 տեղամասում վստահված անձինք պահանջում էին արձանագրել ընտրողի կողմից սեփական քվեաթերթիկի լուսանկարման փաստը, սակայն հանձնաժողովի նախագահին ընդդիմանում էր և չէր կազմում արձանագրություն: Շրջիկ խմբի ժամանումից հետո նախագահը զանգահարել է Տարածքային ընտրական հանձնաժողով, ապա նոր հնարավորություն տվել վստահված անձանց գրելու իրենց գնահատականը գրանցամատյանում:]


Քվեարկության մասին բարձրաձայնելու դեպքեր գրանցվել են դիտարկված տեղամասերից 9-ում, ընդհանուր առմամբ, 20 այդպիսի դեպք է գրանցվել: Դեպքերից 3-ում ընտրողը բարձրաձայն նշել է, որ քվեարկում է Արայիկ Հարությունյանի օգտին, 1-ում՝ Մասիս Մայիլյանի:



[Բերդաշենի 5/9 տեղամասում ընտրողը մոտեցել է Վիտալի Բալասանյանի վստահված անձին և նրան ցույց տվել իր քվեարկած թերթիկը:]

Քվեարկության սենյակում գտնվելու իրավունք ունեցող անձանց կողմից վկայականը տեսանելի չկրելու դեպքեր արձանագրվել են դիտարկված տեղամասերից 15-ում, արձանագրվել է այդպիսի 38 դեպք:

Գծապատկեր 16. Վկայականը տեսանելի չկրող անձանց ներկայությունն քվեասենյակում



26 դեպքում վկայականը տեսանելի չեն կրել վստահված անձինք, որոնցից

- 2՝ «Ազատ հայրենիք» կուսակցության
- 2-ը՝ Արայիկ Հարությունյանի
- 4-ը՝ Վիտալի Բալասանյանի:


Մյուս դեպքերի մասով դիտորդները չեն կոնկրետացրել, թե որ թեկնածուի/կուսակցության վստահված անձինք են եղել խախտում անողները: Դեպքերի մեծամասնությունում առաքելության դիտորդների՝ հանձնաժողովի նախագահին դիմելու և նախագահի՝ վստահված անձանց հորդորելուց հետո վերջիններս սկսում էին տեսանելի կրել վկայականը, սակայն հաճախակի դա կրում էր ժամանակավոր բնույթ:

Հատկանշական է, որ 9 դեպքում վկայականը տեսանելի չեն կրել հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ նախագահը և քարտուղարը:

[Մաճկալաշենի 5/24 տեղամասում Վիտալի Բալասանյանի վստահված անձը պարբերաբար չի կրել վկայականը: Օրվա առաջին կեսին նախագահը նկատողություն է արել այդ առիթով, սակայն անօգուտ, իսկ երկրորդ կեսին դադարել է նկատողություն անել:]


Տեղամասերում 15-ից ավել ընտրող լինելու 66 դեպք է գրանցվել: Դրանք նկատվել են դիտարկված տեղամասերի 18%-ում:

Գծապատկեր 17. Տեղամասում 15 ընտրողից ավել է եղել



Կուտակումների բոլոր դեպքերում հանձնաժողովի նախագահը ինքնուրույն կամ ոստիկանին ներգրավելով կարգավորել է իրավիճակը: Այդ դեպքերն ըստ տեղամասերի դասավորվել են հետևյալ կերպ.

Գծապատկեր 18. Տեղամասերում 15-ից ավելի ընտրողի դեպքերի քանակը ըստ ՏԸՀ-ի




Տեղամասային կենտրոնի ներսում քարոզչական նյութերով, կոչերով կամ ուղղորդող այլ միջոցառումներով ընտրողների կամարտահայտման վրա ներազդելու դեպքերը դիտարկվել են 1/4 տեղամասում 2 դեպք և 5/4 տեղամասում 1 դեպք:

[Ստեփանակերտի 1/4 տեղամաս. երկու դեպքն էլ գրանցվել է վստահված անձանց կողմից: Առաջին վստահված անձը ներս է մտել «Միասնական հայրենիք» կուսակցության լոգո կրող պայուսակով, երկրորդ դեպքում էլ վստահված անձը ներս է մտել կազմի վրա Վիտալի Բալասանյանի նկարը, լոգո ու կարգախոս պատկերող նոթատետրով:]

[Ճարտարի 5/4 տեղամաս. ՀՀԴ վստահված անձը ներս է մտել կուսակցության տարբերանշաններով համազգեստով, դիտորդները դիմել են հանձնաժողովի նախագահին, և նրան դուրս են ուղեկցել:]

Առաքելության շրջիկ դիտորդներն էլ արձանագրել են քարոզչության դեպք Նոր Կարմիրավան համայնքի թիվ 4/30 ընտրատեղամասում, Սոնա Աղեկյանը, որպես ՉԼՍ

ներկայացուցիչ, իրականացրել է քարոզչություն Վիտալի Բալասանյանի օգտին: Շրջիկ խումբը հորդորել է հանձնաժողովի նախագահին այդ մասին կազմել արձանագրություն:




Դիտարկված 49 տեղամասերի 20%-ում գրանցվել են դեպքեր, երբ որևէ մեկն իր վրա էր վերցնում հանձնաժողովի նախագահի գործառույթները: 8 տեղամասերում այդ գործառույթներն իրենց վրա են վերցրել վստահված անձինք: Առաքելության դիտորդները նշել են «Ազատ հայրենիք», «Միասնական հայրենիք» կուսակցությունների, Մասիս Մայիլյանի, Վիտալի Բալասանյանի, Աշոտ Ղուլյանի վստահված անձանց հետ կապված դեպքեր:

[Ասկերանի 2/1 տեղամաս. մարդկանց կուտակումների ժամանակ վստահված անձը ձայնն է բարձրացրել, խառնաշփոթ է ստեղծել, փորձել է օգնել նախագահին: Մի ուրիշ անգամ վստահված անձը ցուցումներ է տվել, բղավել է ընտրատեղամասում: Մի այլ վստահված անձ էլ ուղղորդել է ընտրողներին, թե որ ընտրողների ցուցակի մոտ գնան, անընդհատ հարցրել է ընտրողների թիվը: Երբ դիտորդները հորդորել են, որ վստահված անձը չուղղորդի ընտրողներին, վերջինս պնդել է, որ բոլորն իր ծանոթներն են, ընդամենն ուզում է օգնած լինել:]

Խախտումները և գնահատականները գրանցամատյանում չեն գրանցվել կամ ոչ միշտ են գրանցվել դիտարկված 49 տեղամասերից 12-ում:

Դիտարկված տեղամասերի 20%-ում արձանագրվել է վիճաբանության 15 դեպք: Ֆիզիկական բռնության դեպքեր չեն արձանագրվել:



10 դեպքում վիճաբանության կողմ են եղել վստահված անձինք, ընդ որում, դրանցից 4-ում Վիտալի Բալասանյանի վստահված անձինք, որոնք վիճաբանության են բռնվել հանձնաժողովի նախագահի, ոստիկանի, գյուղապետերի հետ: 7 դեպքում վիճաբանության կողմ են հանդիսացել հանձնաժողովի նախագահը կամ այլ անդամներ, դեպքերից 4-ում կողմ են եղել ընտրողները, 2-ական դեպքում լրագրողներ և համայնքի ղեկավարներ, 1-ական դեպքում թեկնածու և դիտորդ: 5 դեպքում վիճաբանությունը դադարեցնելու նպատակով հանձնաժողովի նախագահի կողմից ծառայություն իրականացնող ոստիկանը հրավիրվել է քվեասենյակ և միջամտել: Հիմնականում վիճաբանության պատճառ է հանդիսացել հանձնաժողովի կողմից խախտումների չվերացնելը և այս կամ այն կարգավորման տարըմբռնումը:


[Ստեփանակերտի 1/4 տեղամաս. պատգամավորի թեկնածու, Արցախի հեղափոխական կուսակցության նախագահը ներկայացել է մեղադրանքով, որ ունի ապացույց այն մասին, որ քաղաքացիներից ոմանք կնքված դատարկ քվեաթերթիկներ են վերցրել և տեղամասից դուրս փոխանցել ուրիշի: Նշել է, որ դիտորդներն ու վստահված անձինք պետք է տեղամասում այնպես կանգնեն, որ տեսախցիկով տեսանելի լինի, թե քվեախցիկում ինչ է կատարվում: Թեկնածուն հեռացվել է նախագահի կողմից:]

[Մաճկալաշենի 5/24 տեղամասում Վիտալի Բալասանյանի վստահված անձը վիճաբանել է թե՛ ներկայիս և թե՛ նախկին համայնքի ղեկավարների հետ, վերջինս Արայիկ Հարությունյանի՝ տվյալ տարածքի նախընտրական շտաբի պետն է եղել:]

[Շուշիի 7/2 տեղամասում LuysPress.am-ի լրագրողն ակնհայտ ագրեսիվ վարքագիծ է դրսևորել առաքելության դիտորդների նկատմամբ՝ պարտադրելով հարցազրույց տալ: Դիտորդները հրաժարվել են, իսկ լրագրողը ճնշել, սպառնացել, հեզնել և վիրավորել է դիտորդներին: Դեպքի կապակցությամբ հանձնաժողովը որևէ քայլ չի ձեռնարկել:]


8 տեղամասերում հանձնաժողովների անդամների գործառույթների փոփոխությունը վիճակահանության հիման վրա ոչ միշտ է իրականացվել:

Գծապատկեր 21. Հանձնաժողովի անդամների գործառույթների փոփոխության պահպանումը վիճակահանության հիման վրա




Հանձնաժողովի անդամներն ընտրողներին ոչ միշտ են ներկայացրել քվեարկության կարգը 24 տեղամասերում:

Գծապատկեր 22. Հանձնաժողովի անդամների կողմից ընտրողներին քվեարկության կարգը ներկայացնելը




Դիտարկված 49 տեղամասերից միայն 10-ում է, որ առաքելության երկու գործընկեր դիտորդներ հանձնաժողովի աշխատանքը քվեարկության ողջ ընթացքում գնահատել են շատ լավ: 39 տեղամասերում օրվա կեսին կամ ամբողջ օրվա ընթացքում դիտորդներն այդ աշխատանքը գնահատել են բավարար: Շատ վատ չի գնահատվել ոչ մի տեղամասում:

Գծապատկեր 23. Հանձնաժողովի անդամների՝ քվեարկության կարգին և իրենց գործառույթներին տիրապետելը




Տեղում ծառայություն իրականացող ոստիկանների գործողությունները դիտարկված տեղամասերից միայն 3-ում են դիտորդներն անբավարար գնահատել՝ նշելով, որ ոստիկաններն անտարբեր են եղել խախտումների նկատմամբ կամ անգործություն են ցուցաբերել: 21 տեղամասերում դիտորդները նշել են, որ ոստիկանները տիրապետում են իրավիճակին:

Գծապատկեր 24. Տեղում ծառայություն իրականացնող ոստիկանների գործողությունների գնահատական



Ըստ դիտորդների գնահատականի՝ դիտարկված տեղամասերի 6%-ում իրավասու մարմինները պատշաճ գործողություններ չեն իրականացրել, իսկ 12%-ում մասամբ են գործողություններ ձեռնարկել խախտումները շտկելու համար:

Գծապատկեր 25. Պատասխանատու մարմինները միջոցներ են ձեռնարկել արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ



Հանձնաժողովների նախագահները դիտարկված տեղամասերի մեծ մասում փորձել են շտկել խնդիրները և կանխել խախտումները, սակայն դեպքերի մեծամասնությունում արել են դա դիտորդների, իսկ երբեմն վստահված անձանց կողմից ուշադրությունը հրավիրելուց, հորդորելուց հետո:

Առաքելության դիտորդները դիտարկված 49 տեղամասերից 32-ում թերությունների կամ խախտումների առնչությամբ գործողություններ են ձեռնարկել՝


դիմել են հանձնաժողովի նախագահին, ահազանգել են իրավաբանին կամ շրջիկ խմբին, որոշ դեպքերում տեղամասի շրջակայքում նկատած խախտումների կապակցությամբ դիմել են տեղում ծառայություն իրականացնող ոստիկանին:

Ձայների ամփոփում

Առաքելության դիտորդներն ընտրության առաջին փուլում ձայների ամփոփման գործընթացը ևս դիտարկել են 49 տեղամասերում, որտեղ գրանցվել է հետևյալ իրավիճակը:

Դիտարկված տեղամասերից 3-ում ամփոփման նիստին քվեասենյակում ներկա է եղել ոստիկան, որին չի հրավիրել հանձնաժողովի նախագահը, որոնցից 2 դեպքում չի միջամտել գործընթացներին, սակայն չի էլ հեռացվել, հանձնաժողովի նախագահը նշել է, որ տեղյակ չէ, թե ինչու է ներկա ոստիկանը: 1 դեպքում, ոստիկանի ասելով, ոստիկանությունից իրեն հարցրել էին ընտրության արդյունքները, և երբ նախագահը հայտարարում էր ձայների արդյունքները, ոստիկանն իր մոտ գրանցում էր:


Գծապատկեր 26. Տեղամասում ներկա են ոստիկաններ՝ առանց նախագահի հրավերի



Ստեփանակերտի 1/16 տեղամասում նիստին ներկա են գտնվել Արայիկ Չարությունյանի 2 վստահված անձ, իսկ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի 2/17 տեղամասում ներկա է գտնվել գյուղապետը, որը, ըստ դիտորդի, ակնհայտորեն Արայիկ Չարությունյանի կողմնակիցն է եղել, իսկ կինը և աղջիկը տվյալ հանձնաժողովի անդամներ են եղել:

Ձայների ամփոփման նիստին վկայական չկրող անձինք եղել են դիտարկված տեղամասերի 8%-ում, ընդհանուր առմամբ, 7 դեպք: 3-ական դեպքում եղել են վստահված անձինք և հանձնաժողովի անդամներ, մեկ դեպքում՝ թեկնածու: Դեպքերից 3-ում հանձնաժողովի նախագահը պարտադրել է տեսանելի կրել, մի դեպքում հորդորել է տեսանելի կրել, բայց ապարդյուն, մյուս 3 դեպքում գործողություն չի ձեռնարկել:


Գծապատկեր 27. Տեղամասում գտնվել են վկայականը տեսանելի չկրող անձինք



1 տեղամասում՝ Կարմիր շուկայի 5/19, տեղամասը փակելուց հետո ծայների ամփոփման գործընթացն անհապաղ չի սկսվել, քանի որ հանձնաժողովը որոշել է ընդմիջում անել: 4 տեղամասերում նիստն ընդհատել են սնվելու/ծխելու նպատակով, ընդ որում, դրանցից մեկում 2 անգամ, 3 տեղամասում միջադեպ է եղել, որոնցից մեկը կապված է եղել ընտրողների ստորագրությունների և առկա քվեաթերթիկների տարբերության հետ, երկրորդը՝ հանձնաժողովի անդամի առողջական խնդրի պատճառով, իսկ մյուսը ներկայացնում ենք ստորև՝ մեջբերելով դիտորդի խոսքը.


[Ստեփանակերտի 1/28 տեղամասում վիճաբանություն է եղել «Արդարություն» կուսակցության վստահված անձի և հանձնաժողովի նախագահի միջև՝ վավեր և անվավեր թերթիկների մեկնաբանման առնչությամբ: Երբ նշումը վանդակից մի փոքր դուրս եկած Էր, օրինակ, Արայիկ Զարությունյանի դեպքում, համարվում էր վավեր, իսկ մյուս թեկնածուների դեպքում՝ անվավեր: Ներկա գտնվող լրագրողը ևս վիճաբանություն է սկսել՝ ասելով, որ չի շարունակվելու ամփոփումը: Այս միջադեպի կապակցությամբ տեղամաս են եկել նաև Արցախի ԿԸՀ նախագահը, ՀՀ ԿԸՀ ներկայացուցիչներ:]

Գծապատկեր 28. Քվեների ամփոփման նիստի անընդհատությունը



Վերոնշյալ 8 դեպքերը գրանցվել են 6 տեղամասերում:

Դիտորդների կարծիքով՝ դիտարկված 49 տեղամասերի 80%-ում հանձնաժողովի նախագահը տիրապետել է ձայների հաշվարկի կարգին:



Ձայների հաշվարկի գործընթացի և հանձնաժողովի գործողությունների հետ կապված դիտորդներն արձանագրել են նաև հետևյալ դեպքերը.

- 4 տեղամասերում քվեաթերթիկների հաշվարկը չի ընթացել սահմանված կարգով. քվեաթերթիկները քվեատուփից դուրս են բերվել տրցակով կամ հանձնաժողովի այլ անդամների կողմից:

- 2 տեղամասերում հանձնաժողովը քվեաթերթիկներն անվավեր ճանաչելու գործընթացում չի առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: Մի դեպքում նմանատիպ քվեաթերթիկներից Արայիկ Հարությունյանի քվեաթերթիկը վավեր են համարել, մյուս թեկնածուներինը՝ ոչ: Մյուս դեպքում ընտրողը նշում էր կատարել և՛ թեկնածուի հերթական համարի թվի վրա, և՛ վանդակում, դիտորդը տեղեկացրել է, որ անվավեր է, իսկ հանձնաժողովը քվեարկության արդյունքում որոշել է, որ վավեր է:

- Հանձնաժողովի անդամներից բացի այլ անձանց անմիջական մասնակցություն հաշվարկի գործընթացին նկատվել է 1 տեղամասում՝ Մասիս Մայիլյանի վստահված անձի կողմից:

- 2 տեղամասերում փորձել են գրանցամատյանում տվյալները լրացնել մատիտով, սակայն դիտորդի դիտարկումից հետո օգտագործել են գրիչ:

- 2 տեղամասերում փորձել են ինչ-որ անճշտություններ շտկելու համար իրականությանը չհամապատասխանող թվեր գրանցել արձանագրություններում:

- 1 տեղամասում նկատվել է հանձնաժողովի անդամի՝ ալկոհոլ օգտագործած լինելու դեպք:

Ստեփանակերտի 1/28 տեղամասում հանդիպել է շուրջ 20 քվեաթերթիկ ակնհայտ մուգ նշումով՝ բոլորը Արայիկ Հարությունյանի օգտին:

3/32 և 4/17 տեղամասերում հանդիպել են այլ գույնի գրիչով նշումներով քվեաթերթիկներ, որոնք հանձնաժողովը անվավեր է համարել: Հիշեցնենք, որ ճիշտ է՝ տարբեր գույնի գրիչներով քվեարկելը կարող է որպես վերահսկողության միջոց օգտագործվել թեկնածուների կողմից, սակայն ԱՀ ընտրական օրենսգիրքը չի սահմանում քվեարկության գրիչի գույն, և այս առումով հանձնաժողովի գործողություններն իրավաչափ չէին:

ԱՀ ընտրական օրենսգիրքը համապետական ընտրությունների դեպքում սահմանում է, որ նախ պետք է ամբողջությամբ ամփոփվեն նախագահի ընտրության արդյունքները, ապա բացվի ԱԺ քվեատուփը: Դիտարկված 49 տեղամասերից 7 ում մինչև ԱԺ քվեատուփի բացումը, ճիշտ է, ամփոփված է եղել նախագահի թեկնածուների քվեաթերթիկների հաշվարկը, սակայն պարկը փակված չի եղել և փակվել է վերջում՝ ԱԺ ընտրությունների արդյունքների ամփոփման հետ: Եվս 8 տեղամասերում նախագահի և ԱԺ ձայների ամփոփման ավարտը, ըստ արձանագրության վրա նշված ժամի, նույնն է եղել:

Ձայների հաշվարկի նիստին առաքելության դիտորդների իրավունքները չեն խախտվել:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ. 2-ՐԴ ՓՈԽ

Ինչպես նշվեց, ԻԶՄ-ն 2020 թվականի ապրիլի 14-ին Արցախի Նախագահի ընտրությունների 2-րդ փուլին դիտորդական առաքելություն է իրականացրել առաջին փուլից տարբերվող մեթոդաբանությամբ: Պայմանավորված Նոր կորոնավիրուսի համավարակի տարածմամբ, այդ թվում՝ ԱԶ-ում գրանցված դեպքերով՝ առաքելությունը փորձեց մինիմալի հասցնել դիտորդների՝ տեղում գործընթացներին մասնակցությունը: Այս փուլում դիտարկվեցին Ստեփանակերտ քաղաքի և շրջակայքի ընտրությունների բոլոր տեղամասերը՝ հետևելով դրանց ուղիղ հեռարձակումներին տեղամասերում տեղադրված տեսանկարահանող սարքերի շնորհիվ: Դիտարկման քարտերը փոփոխվեցին՝ ներառելով այնպիսի հարցեր, որոնք հնարավոր էր արձանագրել առցանց դիտարկման միջոցով: Այս առումով, 1-ին փուլի հետ համեմատությամբ, երկրորդ փուլում հնարավոր է եղել դիտարկել ընտրական գործընթացի ավելի քիչ ասպեկտներ:

3 շրջիկ խմբերի միջոցով օրվա ընթացքում դիտարկումներ են իրականացվել ամենախնդրահարույց տեղամասերում՝ Ստեփանակերտ, Ասկերանի, Շուշիի, Մարտունու շրջաններում:


Ստորև առանձին բաժիններով ամփոփված են քվեարկության օրը 48 տեղամասերում իրականացված դիտարկումների արդյունքում լրացված դիտարկման քարտերի տվյալները, ինչպես նաև առանձին օրինակներ:

Քվեարկության Նախապատրաստում

Հանձնաժողովի առավոտյան նիստը դիտարկվել է 46 տեղամասերում, քանի որ 2 տեղամասերի ուղիղ հեռարձակումը առավոտյան 7:00-8:00-ն ընկած ժամանակահատվածում չի աշխատել:

Հանձնաժողովի անդամների գործառույթները վիճակահանությամբ հստակ սահմանվել են տեղամասերի 54%-ում, 9% տեղամասերում վիճակահանությունն առհասարակ տեղի չի ունեցել, իսկ 37% տեղամասերի դեպքում վիճակահանությունը տեսանելի/լսելի չի եղել տեսաձայնագրման միջոցով: Այսպիսի 17 տեղամասերից 9-ի պարագայում դիտորդները նշել են, որ հանձնաժողովի անդամները տվյալ ժամանակահատվածում չեն գտնվել քվեարկության սենյակում՝ կասկածելով, որ հնարավոր է՝ քվեարկությունը տեղի է ունեցել կողքի սենյակում: Ըստ Ընտրական օրենսգրքի տրամաբանության՝ ընտրական հանձնաժողովի համար քվեարկության օրը աշխատանքային տարածք սահմանվում է քվեասենյակը, ուստի այլ տարածքում հանձնաժողովի առավոտյան նիստը կազմակերպելը առաքելությունը համարում է ընթացակարգային խախտում:

Գծապատկեր 30. Գործառույթների սահմանում վիճակահանությամբ



Հանձնաժողովի նիստի ընթացքում նկատվել է հետևյալը.

- 1 տեղամասում խոչընդոտվել է տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձի մուտքը:


- 9 տեղամասերում գրանցվել է ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձի՝ տեղամասային կենտրոնում գտնվելու ավելի քան 17 դեպք:

- 14 տեղամասերում շուրջ 30 անգամ ոստիկանը քվեասենյակ է մուտք գործել առանց հանձնաժողովի նախագահի հրավերի:


- 15 տեղամասում գրանցվել է վկայականը տեսանելի չկող անձանց ներկայության 23 դեպք:

- 1 տեղամասում գրանցվել է վիճաբանություն

Գծապատկեր 31. Ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձ գտնվել է քվեասենյակում




Գծապատկեր 32. Ոստիկանը քվեասենյակ է մուտք գործել առանց հանձնաժողովի նախագահի հրավերի



- 3 տեղամասում քվեարկությունը սկսվել է ժամը 8:00-ից շուտ:


Քանի որ ԱՅ ԿԸՀ-ն հատուկ որոշմամբ սահմանել էր, որ տեղամասում ներկա գտնվող բոլոր անձինք պարտադիր պետք է կրեն վարակի պաշտպանիչ միջոցներ (դիմակներ, ձեռնոցներ), ողջ օրվա ընթացքում առաքելության դիտորդները դիտարկել են նաև դրա խախտման դեպքերը: Հանձնաժողովի առավոտյան նիստին 11 տեղամասերում նկատվել է առանց պաշտպանիչ միջոցների 24 անձի ներկայություն:



Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում


2020 թ. ապրիլի 14-ին՝ Արցախի նախագահական ընտրությունների երկրորդ փուլին, ժամը 8:00-ից 20:00-ն դիտորդներն առցանց ռեժիմով մշտապես դիտարկել են իրավիճակը և խախտումները տեղամասերի ներսում: Ըստ այդմ, դիտարկված 48 տեղամասերում արձանագրվել է հետևյալ իրավիճակը.

- 1 տեղամասում խոչընդոտվել է տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեցող որևէ անձի մուտքը. *[Ստեփանակերտի 1/25 տեղամաս եկած դիտորդին գրանցեցին 10 րոպե տևած բանակցություններից հետո:]*



- 20 տեղամասերում նկատվել է գտնվելու իրավունք չունեցող անձի ներկայության 80 դեպք, այդ թվում՝ տեղամասում ոստիկանների գտնվելու մեծաթիվ դեպքեր:

- 34 տեղամասերում նկատվել է ընտրողի կողմից քվեաթերթիկը քվեախցիկից դուրս լրացնելու կամ ծալելու 260-ից ավելի դեպք:



- 7 տեղամասերում նկատվել է ընտրողի կողմից քվեաթերթիկը լուսանկարելու 9 դեպք:

- 24 տեղամասերում նկատվել է ներկա անձանց (այդ թվում՝ հանձնաժողովի անդամների) կողմից վկայականը տեսանելի չկրելու 86 դեպք:

- 8 տեղամասերում դիտարկվել է այլ անձի կողմից հանձնաժողովի նախագահի լիազորություններն իր վրա վերցնելու 21 դեպք:

- 3 տեղամասերում տեղի է ունեցել վիճաբանության 4 դեպք:




- 3 տեղամասերում օրվա ընթացքում նկատվել է ընտրողների կողմից քվեասենյակում կուտակումների 15 դեպք:

24 տեղամասերում արձանագրվել է ԱՀ ԿԸՀ սահմանած կարգի խախտման ավելի քան 200 դեպք, երբ դիտարկված տեղամասերում ընտրական գործընթացի մասնակիցները չեն կրել համավարակի տարածումը կանխելու համար նախատեսված պաշտպանիչ միջոցներ:

Բացի արձանագրված վերոնշյալ դեպքերը, լրացուցիչ դիտարկումների բաժնում դիտորդները նշել են մի շարք խնդիրների մասին: Դրանք հիմնականում կապված են եղել տեղամասի ոչ ճիշտ կահավորանքի, հանձնաժողովի անդամների՝ իրենց գործառույթները ոչ պատշաճ իրականացնելու, սահմանված կարգով գործառույթների փոփոխություն չիրականացնելու, տեղամասը տևական ժամանակով լքելու և պարագաներն առանց հսկողության թողնելու բազմաթիվ դեպքերի հետ, ինչպես նաև նկարագրվել են այնպիսի իրավիճակներ, որոնք ուղիղ հեռարձակման միջոցով դիտարկման պայմաններում դժվար է վստահաբար դասակարգել որպես այս կամ այն տիպի խախտում:

Օրինակներ.

[Ստեփանակերտի 1/10 տեղամաս. հանձնաժողովի անդամները պարբերաբար բացակայում են քվեասենյակից: Զվեստուլիը հաճախակի «անտեր է» մնում:]



[Ստեփանակերտի 1/13 տեղամաս. քվեատուևի մոտ մարդ չկա: Մոտենում է ընտրող, ինքնուրույն բացում քվեատուևի, գցում քվեաթերթիկը և հեռանում:]


[Ստեփանակերտի 1/17 տեղամաս. քվեատուևի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը գրեթե միշտ բացակայում է, և շատ դեպքերում ընտրողները իրենք են բացում քվեատուևի, երբեմն էլ՝ հանձնաժողովի նախագահը:]

[Ստեփանակերտ 1/24 տեղամաս. հանձնաժողովի անդամների գործառույթների հերթափոխ այդպես էլ տեղի չունեցավ: Հանձնաժողովի նախագահը կատարում էր հանձնաժողովի անդամի գործառույթները, հանձնաժողովի անդամները մանրակրկիտ ուսումնասիրում էին ընտրողների ցուցակները: Հանձնաժողովի անդամը թերթում էր ընտրողների ցուցակը և իր մոտ նշումներ կատարում:]

Ձայների ամփոփում


Արցախի նախագահի ընտրության երկրորդ փուլի ձայների ամփոփման նիստը ևս առաքելությունը դիտարկել է 48 տեղամասերում կազմակերպված առցանց հեռարձակման միջոցով: Այդ տեղամասերում ձայների հաշվարկի նիստերին արձանագրվել է.

- Արդյունքների ամփոփման նիստի ընդհատում 2 տեղամասերում,
- Ներկա գտնվելու իրավունք չունեցող անձի ներկայության 11 դեպք, որոնք գրանցվել են 6 տեղամասային կենտրոններում,



- 12 տեղամասերում արդյունքների ամփոփմանը ներկա է եղել վկայականը տեսանելի չկրող 27 անձ,

Գծապատկեր 40. Տեղամասում վկայականը տեսանելի չկող անձանց ներկայություն




- Ոստիկանի՝ առանց հանձնաժողովի նախագահի կարգադրության քվեասենյակ մուտք գործելու 17 դեպք, որոնք գրանցվել են 7 տեղամասային կենտրոններում: Օրինակ. [Ստեփանակերտի 1/22 տեղամաս. քվեատուփը բացեց ոստիկանը, որը և մինչև վերջ մնաց քվեասենյակում]:

- Քվեաթերթիկների հաշվարկի ընթացակարգը խախտվել է 36 անգամ՝ 11 տեղամասերում:

[Ստեփանակերտ 1/17 տեղամաս. քվեաթերթիկները չեն հանվում հերթով, այլ տրցակով հանձնաժողովի անդամի կողմից, և քվեարկությունը չի բարձրաձայնվում և չի ցուցադրվում մեծամասամբ:]

Գծապատկեր 41. Քվեաթերթիկների հաշվարկի ընթացակարգի խախտում



[Ստեփանակերտ 1/15 տեղամաս. թեկնածուների անունները հայտարարվում ու դրվում են նույն տեղում՝ հանձնաժողովի այն անդամի մոտ, որը հավաքում է Հարությունյան Արայիկի քվեաթերթիկները: Մոտ մեկ տասնյակից ավելի նման դեպք է եղել: Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հարցը որոշում է նախագահը՝ անվավեր քվեաթերթիկները հավաքող հանձնաժողովի անդամի հետ:]

14 տեղամասերում գրանցվել է ԱՀ ԿԸՀ սահմանած կարգի խախտման ավելի քան 40 դեպք, երբ դիտարկված տեղամասերում ընտրական գործընթացի մասնակիցները չեն կրել համավարակի տարածումը կանխելու համար նախատեսված պաշտպանիչ միջոցներ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ-ի դիտորդական առաքելության դիտորդները մարտի 31-ին տեղի ունեցած Արցախի համապետական ընտրություններին ժամը 20:00-ից հետո դիտարկել են բոլոր 8 շրջանների Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը: Ապրիլի 14-ին տեղի ունեցած ԱՀ Նախագահի ընտրության երկրորդ փուլին առաքելության շրջիկ դիտորդներն այցելել են 3 Տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ Ստեփանակերտի, Շուշիի և Ասկերանի՝ մասամբ դիտարկելով վերջիններիս աշխատանքը:

Ընտրությունների առաջին փուլում Տարածքային ընտրական հանձնաժողովներում արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Ստեփանակերտ քաղաքի թիվ 1 Տարածքային ընտրական հանձնաժողովում խոչընդոտվել է ՉԼՍ ներկայացուցչի մուտքը:

[Հանձնաժողովի նախագահը մոտ 10 րոպե հեռախոսով խոսում էր անհայտ անձի հետ՝ ասելով, որ իր ուղեցույցում գրված է, որ ՏԸՀ-ում կարող են ներկա լինել դիտորդները և վստահված անձինք, իսկ ՉԼՍ ներկայացուցիչների մասին ոչինչ գրված չէ, ինքն էլ հիմա չի կարող Ընտրական օրենսգրքով ճշտել դա: Հավելում էր, որ տարածքը փոքր է, և առանց ՉԼՍ ներկայացուցիչների էլի նեղվածք է: Արդյունքում, դիտարկման ողջ ընթացքում ՉԼՍ ոչ մի ներկայացուցիչ ՏԸՀ չեկավ:]

2 ՏԸՀ-ներում հանձնաժողովը ժամը 20.00-ից հետո ոչ լրիվ կազմով է ներկա գտնվել: Շուշիի ՏԸՀ-ում նախագահը հանձնաժողովի մեկ անդամի գործուղած է եղել տեղամասերից մեկը, որտեղից լուրեր են ստացել, որ հաշվարկի ժամանակ հնարավոր են բախումներ վստահված անձանց միջև:

2 ՏԸՀ-ներում հանձնաժողովի անդամները պարբերաբար բանավոր տեղեկություններ են փոխանցել կողմնակի անձանց: 1 դեպքում դիտորդին չի հաջողվել նկատել կողմնակի անձանց կապը ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի հետ: Մյուս օրինակը Շուշիի ՏԸՀ-ից է.

[Հանձնաժողովի անդամը, որը սատարում էր «Ազատ Հայրենիք – ԶԽԴ»-ին և Արայիկ Հարությունյանին, զանգում էր և թվեր հաղորդում:]

8 ՏԸՀ-ներից 4-ի դեպքում ընտրական փաստաթղթերը ոչ միշտ են բերվել տեղամասային հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Օրինակ.

[4/20 տեղամասից ամբողջ նյութերը բերել էր գյուղապետը, պարկը՝ բաց: Գյուղապետին, պարկերի հետ միասին, հետ են ուղարկել և պահանջել են, որ հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը ներկայանան, որից հետո ընդունել են: Գյուղապետը հատուկ համակրանք է ունեցել Արայիկ Հարությունյանի նկատմամբ: Եթե դիտորդը չլիներ, ամենայն հավանականությամբ, կընդունեին փաստաթղթերը:]

3 Տարածքային ընտրական հանձնաժողովներում խնդիրներ են առաջացել տեղամասերից բերվող նյութերի հետ, հիմնականում պարկերը խախտումներով են բերվել: Առավել տարածված խախտում էր գրանցամատյանը և կնիքը, ինչպես նաև փոքր պարկը մեծի մեջ տեղավորելը, որոշ դեպքերում պարկերը ամբողջությամբ չէին փակված: 14 տեղամասերից ժամանած պարկերը վնասված են եղել: 23 տեղամասերից բերված ընտրողների ստորագրություններով ցուցակների փոքր պարկը պատշաճ ձևով փակված չի եղել: Մարտակերտի ՏԸՀ անդամներից մեկը, տեսնելով պարկերի փակման հետ կապված մեծաթիվ խախտումները, տեղամասերից ժամանող պարկերը դիմավորել է դրսում, ասել, որ պարկերը փակեն, նոր ներս բերեն, որպեսզի խախտումները չարձանագրվեն:

4 ՏԸՀ-ներում հանդիպել են դեպքեր, երբ քվեարկության արդյունքների ստորագրված արձանագրությունները բերվել են խախտումներով: Երբեմն դրանք տեղադրված են եղել ընդհանուր պարկի մեջ, երբեմն էլ օրինակներից մեկը լրացվել է ՏԸՀ-ում: 20 տեղամասերի գրանցամատյաններ և 14 տեղամասերի կնիքներ ևս չեն բերվել առանձին, այլ տեղադրված են եղել պարկերի մեջ:

Հաղորդի ՏԸՀ-ում պարկերը ստանալուց հետո հանձնաժողովը չի ապահովել դրանց անվտանգ պահպանումը, ինչը պայմանավորված է եղել տարածքի փոքրությամբ ու անհարմարավետությամբ:

4 տեղամասերից՝ 1/2, 1/3, 1/22, 1/27, տեղամասային ընտրական հանձնաժողովի փաստաթղթերը (նյութերը) հանձնվել են Տարածքային ընտրական հանձնաժողով առավոտյան 8:00-ից հետո:

Որևէ ՏԸՀ-ում տեղամասերի արձանագրությունների մեջ ելակետային թվեր չեն փոխվել: 6 ՏԸՀ-ներում արձանագրվել են տեղամասերից բերված արձանագրություններում ոչ ելակետային տվյալները փոխած լինելու դեպքեր, իսկ 3 ՏԸՀ-ներում փոխվել են այդպիսի տվյալներ: Դեպքերը բխել են չիմացությունից, վերաբերել են պարզ անփութությանը և սխալ հաշվարկի արդյունքում առաջացող անճշտություններին:

3 ՏԸՀ-ներում չի պահպանվել քվեարկության արդյունքների աղյուսակի տպվելու և տեսանելի վայրում փակցվելու՝ 3 ժամը մեկ պարբերականության պայմանը: Պատճառները պայմանավորված են եղել տեղամասերից եկող ոչ պատշաճ փաստաթղթերի հետևանքով շատ ժամանակ ծախսելու և չհասցնելու փաստով:

8 ՏԸՀ-ներից միայն 1-ի նստավայրի տարածքն է բավարար եղել հանձնաժողովի ու դիտորդների արդյունավետ գործելու համար:

Հաղորդի ՏԸՀ-ում նիստին ակտիվորեն մասնակցել և հանձնաժողովի անդամներին օգնել է տեղում ծառայություն իրականացնող ոստիկանը: Նա պարբերաբար զանգեր է կատարել, ինչը դիտորդին կասկածելի է թվացել:


Բացի ընթացակարգային բազմաթիվ առանձնահատկությունների չտիրապետելը, որոշ ՏԸՀ-ներում նույնիսկ չեն իմացել իրենց հանձնաժողովի հերթական համարը, կարծել են, թե հանձնաժողովները համարակալված չեն:

Դիտորդները հիմնականում թույլ են գնահատել Տարածքային ընտրական հանձնաժողովների կարողությունները: Վերջիններս տարբեր իրավիճակներում չեն իմացել իրենց գործողությունները, երբեմն պատշաճ չեն արձագանքել տեղամասային հանձնաժողովների հարցերին, չիմացության պատճառով նախընտրել են չմիջամտել:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՅ ԿԸՅ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2020 թ. մարտի 31-ին կայացած Արցախի համապետական ընտրություններին մասնակցել է ընդհանուր ընտրողների (104,866 ընտրող) 72.5%-ը, ընդ որում, ԱԺ քվեարկությանը մասնակցել է 75,989 ընտրող, իսկ նախագահի ընտրությանը՝ 76,001 ընտրող:

ԱԺ ընտրությունների արդյունքում ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝




5%-ի (կուսակցությունների համար) և 7%-ի (դաշինքների համար) շեմը հաղթահարել են 5 քաղաքական ուժեր, և Ազգային ժողովի պատգամավորական մանդատները բաշխվել են հետևյալ կերպ.

1. «Ազատ Հայրենիք – ԶՄԴ» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակ՝ տասնվեց մանդատ,
2. «Միասնական հայրենիք» կուսակցության ընտրական ցուցակ՝ ինը մանդատ,
3. Արցախի «Արդարություն» կուսակցության ընտրական ցուցակ՝ երեք մանդատ,
4. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակ՝ երեք մանդատ,

5. Արցախի Ժողովրդավարական կուսակցության ընտրական ցուցակ՝ երկու մանդատ:

Նախագահի ընտրության արդյունքներն առաջին փուլում, պաշտոնական տվյալներով, բաշխվեցին հետևյալ կերպ՝



Թեկնածուներից որևէ մեկը չհավաքեց ձայների 50%-ից ավելին, ուստի նշանակվեց ընտրությունների 2-րդ փուլ, որին հնարավորություն ստացան մասնակցելու թեկնածուներից Աղայիկ Չարուկյանը՝ ստանալով քվեների 49.2%-ը, և Մասիս Մաշիյանը՝ ստանալով քվեների 26.4%-ը:

COVID-19 Նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակում մի շարք քաղաքական ուժեր, հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ դիտորդական առաքելություն իրականացնող, ինչպես նաև քաղաքացիներ հանդես էին եկել հայտարարությամբ՝ հորդորելով Արցախի Հանրապետության իշխանություններին չեղարկել ընտրությունները: Ընտրությունների առաջին փուլից հետո, երբ համավարակի դեպք հայտնաբերվեց նաև Արցախում, այդ ալիքն ավելի ակտիվացավ: Ապրիլի 15-ին թեկնածուներից Մասիս Մաշիյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով. «Մարտի 31-ին կայացած համապետական ընտրությունները շատ հեռու էին Նոր պայմաններում արցախյան հանրության ակնկալած ընտրական զարգացումներից: Պարզապես ի գիտություն եմ ընդունում քվեարկությունից հետո ԱՀ ԿԸՀ-ի հրապարակած տեղեկատվությունը և հայաստանյան դիտորդական առաքելության գնահատականները: Մեր

քաղաքացիներին կոչ եմ անում Նոր կորոնավիրուսի համավարակի՝ գնալով ահազնացող վտանգի պայմաններում չմասնակցել երկրորդ փուլի քվեարկությանը...»: Փաստացի, Մասիս Մայիլյանը հրաժարվեց մրցապայքարից՝ չնայած, որ պաշտոնապես նրա անունը մնաց քվեաթերթիկում, և ապրիլի 14-ին կայացած նախագահի ընտրության 2-րդ փուլում քաղաքացիները (5428) քվեարկեցին նաև նրա օգտին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2-րդ փուլին մասնակցեց 47,165 ընտրող, ընտրողների ընդհանուր թվի 45%-ը: Հանրապետության նախագահի երկու թեկնածուներին կողմ քվեարկած 45,288 ընտրողների 88%-ը կամ 39,860 կողմ քվե ստանալու կապակցությամբ ԱՀ ԿԸՀ-ն որոշում կայացրեց Արցախի Հանրապետության նախագահ ընտրված համարել Արայիկ Հարությունյանին: ԿԸՀ-ն հայտարարեց, որ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել ԱՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Առաքելությունը թվով 10 ընտրատեղամասերում իրականացրել է նաև քվեարկողների թվի հաշվարկ, որը 8 տեղամասերի պարագայում շատ մոտ է եղել պաշտոնական արդյունքներին, իսկ մյուս երկու տեղամասերում եղել է էական տարբերություն (2 տեղամասերից մեկում, սակայն, եղել է կապի խափանում):

Առաքելությունը որոշ համեմատական վերլուծություն է իրականացրել ընտրությունների 2 փուլերի մասնակցության տեսանկյունից: Եթե ընտրությունների առաջին փուլի ժամանակ մասնակցությունը քաղաքային համայնքներում եղել էր 70 տոկոս, գյուղականներում՝ 76 տոկոս (տարբերությունը՝ 6 տոկոս), ապա 2-րդ փուլում քաղաքային տեղամասերում այն կազմել է 35 տոկոս, իսկ գյուղականում՝ 56 տոկոս (տարբերությունը՝ 21 տոկոս):

Ընդ որում, թվով 22 ընտրական տեղամասերում (բոլորը գյուղական համայնքներ) երկրորդ փուլի ժամանակ մասնակցությունը եղել է ավելի շատ, քան առաջին փուլում, որը ողջամտորեն չունի սոցիոլոգիական և քաղաքագիտական բացատրություն:

Ամենաբարձր մասնակցությունը՝ 91%, գրանցվել է 8/32 և 8/6 տեղամասերում՝ համապատասխանաբար 11% և 9% ավելի, քան առաջին փուլում: 9%-ով ավելի մասնակցություն գրանցվել է նաև 8/37 և 8/55 տեղամասերում: Հարկ է նկատել, որ տեսախցիկներով կահավորված են եղել հենց քաղաքային տեղամասերը: Որևէ գյուղական տեղամասում տեսախցիկի միջոցով հեռարձակում չի եղել: Այդ գյուղական տեղամասերում չի իրականացվել դիտորդություն, իսկ ընդդիմության վստահված անձինք ընդհանրապես չեն եղել տեղամասերում:

Ծիշտ է՝ գյուղական ընտրական տեղամասերում ընտրողների թիվը փոքր է, սակայն, այդուհանդերձ, մասնակցության համեմատական բարձր ցուցանիշը տարօրինակ և անբացատրելի է, և առավել մտահոգիչ եզրահանգումների տեղիք է տալիս հատկապես Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման և երկրորդ փուլում մրցակցության փաստացի բացակայության պայմաններում:

Նկարագրվածը հիմք է տալիս ենթադրելու, որ քաղաքացիական հասարակության և ընդդիմության կողմից չվերահսկված ընտրական տեղամասերի զգալի մասում եղել են կոպիտ խախտումներ:

ՄԵԴԻԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Ընդհանուր պատկեր

Արցախի Հանրապետությունում լրատվական դաշտն առանձնանում է բազմազանության և, որպես արդյունք, նաև բազմակարծության բացակայությամբ:

Հանրային հեռուստաընկերությունը (Արցախ TV) 24-ժամյա եթեր չի ապահովում, եթերը սկսվում է ժամը 16:00-ից և շարունակվում մինչև կեսգիշեր: Քաղաքական անցուդարձը լուսաբանվում է լրատվական երեք թողարկումներում, ինչպես նաև «Խորհրդարանական ժամ» և «Դեմ առ դեմ» հաղորդումների շրջանակում: Շաբաթական մեկ անգամ եթեր է հեռարձակվում լուրերի ռուսալեզու թողարկում՝ Вестник:

Բացի Արցախ TV-ից, երկրի տարածքում գործում են նաև «Արցախկապ» ՓԲԸ-ի ArTV և «Փեյս հեռուստառադիոընկերություն» ՍՊԸ-ի՝ «Փեյս կինո» և «Փեյս Չատ» հեռուստաալիքները: Նշված երկու ընկերություններն իրականացնում են նաև հայաստանյան հեռուստաալիքների վերահեռարձակում:

Ներարցախյան իրադարձությունները լուսաբանող միակ տպագիր թերթն «Ազատ Արցախն» է, որը լույս է տեսնում պետական դրոշմապատկերի հաշվին, ինչպես նաև Հայ Հեղափոխական դաշնակցության պաշտոնական թերթը՝ «Ապառաժը»: Առցանց տիրույթում առավել ակտիվ է «Արցախ Պրեսս» լրատվական գործակալությունը (artsakhpress.am), որը փոխկապակցված է քաղաքական ուժերից մեկի հետ:

Առցանց տիրույթի արցախյան սեզմենտում գործող մի քանի այլ լրատվական կայքեր ավելի շատ բլոգ են հիշեցնում և փոքր լսարանի պատճառով մեծ ազդեցություն չեն կարող ունենալ:

Արցախի բնակչության շրջանում լրատվամիջոցների և հեռուստաալիքների վարկանիշի ուսումնասիրության որևէ հետազոտություն չկա:

Իրավական կարգավորումներ

ԱՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահի թեկնածուները, ինչպես նաև ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքներն ունեն Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստաընկերության եթերաժամից հավասար պայմաններով անվճար և վճարովի (այդ թվում՝ ուղիղ եթերով) օգտվելու իրավունք: Այդ եթերաժամանակի տրամադրման կարգը և ժամանակացույցը սահմանում է ԿԸՀ-ն:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Արցախի հանրային ռադիոն և հեռուստաընկերությունը լրատվական հաղորդումներում թեկնածուների համար պետք է ապահովեն «ոչ խտրական պայմաններ», նրանց քարոզարշավի վերաբերյալ «անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն»: Ընդ որում, առաջադրված թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից «միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ միջոցառումների

կողմից տեղեկատվության բացակայությունը» հիմք չէ զանգվածային լրատվամիջոցի համար նրանց քարոզարշավի մասին տեղեկություններ չիրապարակելու համար: 3-րդ կետով սահմանված դրույթները տարածվում են վերգետնյա հեռարձակում իրականացնող մյուս հեռուստաալիքների վրա:

Անկողմնակալ և ոչ խտրական լուսաբանում, ըստ նույն հոդվածի 11-րդ կետի, պարտավոր են ապահովել նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հիմնադրված թերթերը և ամսագրերը:

Այս իրավական կարգավորումները, սակայն, չեն տարածվում Արցախում վերահեռարձակվող հայաստանյան հեռուստաալիքների, ինչպես նաև առցանց լրատվամիջոցների վրա, որոնք մեծ ազդեցություն կարող են ունենալ ընտրությունների վրա:

Հեռուստաալիքներ

Արցախ TV

Արցախի Հանրային հեռուստաընկերությունը 24-ժամյա եթեր չի ապահովում. եթերը սկսվում է 16:00-ից և շարունակվում մինչև կեսգիշեր: Այդ ընթացքում հեռարձակվում է լուրերի երեք թողարկում («Օր»)՝ 16:00-ին, 20:00-ին (գլխավոր թողարկում) և 23:40-ի սահմաններում: Զարոգարշավի ընթացքում լուրերի գլխավոր և երեկոյան թողարկումներում առանձնացվել է քարոզարշավի առանձին բլոկ, որում անդրադարձել են նախագահի և Ազգային ժողովում առաջադրված ուժերի քարոզարշավներին: Բացի «Օր» լրատվական թողարկումից, Արցախ TV-ն շաբաթական մեկ անգամ եթեր է հեռարձակել լուրերի ռուսերեն թողարկում (Вестник), որում մշտադիտարկված ժամանակահատվածում քարոզարշավին անդրադարձ չի կատարվել, միայն քարոզարշավի վերջին օրը հարցազրույց է եղել ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանի հետ: Որոշ դեպքերում նախագահի և ԱԺ թեկնածուները լուսաբանվել են իրենց ինստիտուցիոնալ գործառույթների շրջանակում՝ գերազանցապես «խորհրդարանական ժամ» հաղորդման ընթացքում:

Զարոգարշավին անդրադարձ է կատարվել նաև «Դեմ առ դեմ» հաղորդման շրջանակում, որը բացվել էր դեռ քարոզարշավից առաջ և ունի երկու հյուրի մասնակցությամբ բանավեճի ձևաչափ:

Ժամը 17:00-ին սկսվել է քարոզարշավի թեկնածուների համար վճարովի և անվճար եթերաժամանակի բլոկը, որի շրջանակում իրականացվել է նաև «ընտրողների ուսուցում»: «Ընտրողների ուսուցման» տեսանյութերը ցուցադրվել են նաև օրվա տարբեր ժամերի՝ օրական միջինը 5 անգամ:

Ընտրությունների վերաբերյալ ոստիկանության և Պաշտպանության բանակի հայտարարություններին անդրադարձ եղել է, համապատասխանաբար, «2րդ երկուս» և «Գոյամարտ» հաղորդումների շրջանակում:


Զարոգարշավի վերջին օրը կազմակերպվել է հեռուստաբանավեճ, որին նախատեսվում էր, որ պետք է մասնակցեին նախագահի բոլոր թեկնածուները: Բանավեճից բացի, Արցախ TV-ի եթերում հատուկ քարոզարշավի լուսաբանման համար որևէ հաղորդում չի բացվել:

Ընդհանուր առմամբ, հեռուստաալիքը զերծ է մնացել քարոզարշավից դուրս թեկնածուների ոչ ինստիտուցիոնալ գործառնություններով հիշատակումներից: Այնուամենայնիվ, ոչ լրատվական բնույթի հաղորդումներում մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է նման դեպք՝ երեք թեկնածուների հիշատակմամբ:

Լռության օրը և քվեարկության օրը հեռուստաալիքն ավելացրել է լուրերի թողարկումների թիվը: Եթերում պահպանվել են լռության օրվան բն որոշ կանոնները:

Ընտրողների ուսուցում

Արցախի Հանրային հեռուստաընկերությունը մարտի 7-ից մինչև քարոզարշավի ավարտը, թեկնածուների լուսաբանումից բացի, ավելի քան 9000 վայրկյան ժամանակահատված է տրամադրել ընտրողների ուսուցմանը (voter education): Մասնավորապես, «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակի», ոստիկանության, ՀՀ-ում Արցախի մշտական ներկայացուցչության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրամադրած տեսանյութերով ընտրողներին պարբերաբար ներկայացվել են ընտրություններին մասնակցության կարգը և իրենց իրավունքները: Որպես կանոն՝ այդ տեսանյութերը ցուցադրվել են քաղաքական ուժերին տրամադրվող եթերաժամանակի սկզբում, ընթացքում և վերջում կամ լուրերի թողարկումից առաջ/հետո:



Քաղաքական գովազդ. կարգավորումներ

Փետրվարի 26-ին ԿԸՀ-ն, համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի, սահմանել է նախագահի թեկնածուների և ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար Արցախի հանրային հեռուստատեսությամբ տրամադրվող անվճար և վճարովի եթերաժամի կարգը և ժամանակացույցը:

Ըստ ԿԸՀ որոշման՝ փետրվարի 27-ից մարտի 29-ը ներառյալ (ժամը 16:00-24:00) նախագահի թեկնածուներին Հանրային հեռուստաընկերությամբ պետք է տրամադրվեր ոչ ավելի, քան 30-ական րոպե (1800 վայրկյան) անվճար և ոչ ավելի, քան 80-ական րոպե (4800 վայրկյան) վճարովի եթերաժամանակ, ընդ որում՝ բոլոր թեկնածուներին՝ 9 անգամ անվճար և 8 անգամ վճարովի հիմունքներով:


Ինչ վերաբերում է ԱԺ-ում առաջադրված քաղաքական ուժերին, ապա նրանցից յուրաքանչյուրին Հանրային հեռուստաընկերությամբ փետրվարի 27-ից մարտի 29-ը ներառյալ (ժամը 16:00-24:00) պետք է հատկացվեր ոչ ավելի, քան 60 րոպե անվճար (3600 վայրկյան) և ոչ ավելի, քան 120 րոպե (7200 վայրկյան) վճարովի եթերաժամանակ, ընդ որում, բոլոր քաղաքական ուժերին՝ *9 անգամ անվճար և 8 անգամ վճարովի հիմունքներով*: Այնուամենայնիվ, ԿԸՀ որոշմանը կցված ժամանակացույցում (Հավելված 3) յուրաքանչյուր քաղաքական ուժի համար սահմանված է 9 անգամ անվճար և 9 անգամ վճարովի եթերաժամանակ (օրական առավելագույնը 15 րոպե), ինչի արդյունքում յուրաքանչյուր թեկնածուին տրամադրվող վճարովի եթերաժամանակը ստացվում է առավելագույնը 135 րոպե (8100 վայրկյան), ոչ թե 120, ինչպես նշված է որոշման մեջ:

Քաղաքական գովազդ. ընդհանուր պատկեր

Արցախի հանրային հեռուստաընկերությունը փետրվարի 27-ից մինչև քարոզարշավի վերջին օրը՝ փետրվարի 29-ը, թեկնածուներին տրամադրել է վճարովի և անվճար հիմունքներով եթերաժամանակ՝ ըստ ԿԸՀ ժամանակացույցի:

Փետրվարի 27-ին քաղաքական գովազդի բլոկում նախագահական և ԱԺ քարոզարշավները ընդմիջվել են այլ հաղորդումներով և սկսվել, համապատասխանաբար, ժամը 17:00-ին և 18:00-ին:

Փետրվարի 27-ին և 28-ին նախագահական և Ազգային ժողովի քարոզարշավի բլոկը եթեր է հեռարձակվել միասնական խորագրով՝ «ԱՀ նախագահի և ԱԺ ընտրություններ 2020» (Նկար 1), ինչը որոշակի շփոթություն է առաջացնում, քանի որ թույլ չի տալիս տարբերակել՝ արդյո՞ք նախագահի թեկնածուին է տրամադրված եթերաժամանակը, թե՞ նրան առաջադրած կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին): Այս շփոթությունը պայմանավորված է նաև նրանով, որ քարոզչական տեսանյութերի բովանդակությունից ինքնին դժվար է հասկանալ՝ արդյո՞ք դա նախագահի թեկնածուի քարոզարշավն է, թե՞ նրան առաջադրած քաղաքական ուժի:



Նկար 1

Մասնավորապես, փետրվարի 28-ին նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանը, ըստ ԿԸՀ ժամանակացույցի, ունեցել է 10 րոպե եթերաժամանակ վճարովի հիմունքներով, իսկ նրան առաջադրած կուսակցությունների դաշինքը՝ «Նոր Արցախը», այդ օրը եթերաժամանակի իրավունք չի ունեցել: Այն դեպքում, երբ քաղաքական գովազդը ներկայացվում է «ԱՀ նախագահի և ԱԺ ընտրություններ 2020» խորագրով, իսկ փաստացի նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանի քարոզչական տեսանյութը սկսվում և ավարտվում է «Նոր Արցախ» դաշինքի տարբերանշանով, տպավորություն է ստեղծվում, որ տեսանյութը ԱԺ քարոզարշավի բլոկի մաս է (ոչ թե նախագահականի), մինչդեռ դրա շրջանակում «Նոր Արցախը» եթերաժամանակի իրավունք չունի:

Փետրվարի 29-ից արդեն այս խնդիրները կարգավորվել են. նախագահական և ԱԺ քարոզարշավներն առանձնացվել են առանձին խորագրերով և հաջորդել են միմյանց: Քաղաքական գովազդի բոլոր սկսվել է ժամը 17:00-ին «Քաղաքական գովազդ» (եթե անվճար է) և «Քաղաքական գովազդ. վճարովի եթեր» (եթե վճարովի է) մակնշումներով: Եվս մեկ փոքրիկ շփոթություն առաջացել է մարտի 9-ի եթերում, երբ Մասիս Մայիլյանի և Արայիկ Ջարությունյանի քաղաքական գովազդները չեն տարանջատվել և անմիջապես հաջորդել են միմյանց:




Նկար 2



Նկար 3

Անվճար եթերաժամանակ

Գծապատկեր 45-ից երևում է, որ ԱԺ քարոզարշավին մասնակցող բոլոր քաղաքական ուժերն օգտվել են իրենց հատկացված անվճար եթերաժամանակից, ընդ որում, այն գրեթե լիարժեք սպառել են «Ազատ Հայրենիք – ԺՄԴ» դաշինքը և «Ազգային վերածնունդ» կուսակցությունը, երրորդ տեղում ԱԺԿ-ն է: Ամենաքիչն անվճար եթերաժամանակից օգտվել են «Արդարությունը», «Արցախի հեղափոխական կուսակցությունը» և «Անկախության սերունդը» (Գծապատկեր 45): Բոլոր քաղաքական ուժերն անվճար եթերաժամանակից օգտվել են առավելագույնը 9 անգամ: Ընդհանուր առմամբ, քաղաքական ուժերից ոչ մեկ չի գերազանցել առավելագույն 3600 վայրկյանը:




Ինչ վերաբերում է նախագահի թեկնածուներին, գրեթե լիարժեք իրենց հատկացված անվճար եթերաժամանակից օգտվել են Մասիս Մայիլյանը, Հայկ Խանումյանը, Բելլա Լալայանը, Աշոտ Ղուլյանը, Դավիթ Բաբայանը՝ 32 օրերի ընթացքում մոտենալով, բայց չգերազանցելով 1800 վայրկյանը: Իրենց հատկացված անվճար եթերաժամանակը առավել քիչ են օգտագործել Աշոտ Դադայանը և Ռուսլան Իսրայելյանը, իսկ Մելսիկ Պողոսյանն ընդհանրապես չի օգտվել դրանից (Գծապատկեր 45):

Վճարովի եթերաժամանակ


Գծապատկեր 46-ից երևում է, որ Ազգային ժողովի կուսակցություններին և դաշինքներին հատկացված վճարովի եթերաժամանակից ամենաշատը օգտվել է «Ազգային վերածնունդ» կուսակցությունը՝ մոտենալով առավելագույն՝ 8100 վայրկյանին: Նրան հաջորդում են «Ազատ Հայրենիք – ԶԽԴ» և «Նոր Արցախ» դաշինքները: Վճարովի եթերաժամանակից ընդհանրապես չեն օգտվել «Անկախության սերունդը», «Արցախի հեղափոխական կուսակցությունը», Լեռնային Ղարաբաղի Կոմունիստական կուսակցությունը: Բոլոր թեկնածուներին վճարովի եթերաժամանակ տրամադրվել է յուրաքանչյուրին առավելագույնը 9 անգամ, բացի «Ազգային վերածնունդից»՝ 10 անգամ: Արցախ TV-ն ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական և կենտրոնական ընտրական հանձնաժողովներին տեղեկացրել է, որ մարտի 12-ին «Ազգային վերածնունդ» կուսակցության քաղաքական գովազդը տեխնիկական

խնդիրների պատճառով դադարեցվել է, ուստի կուսակցության ղեկավար Հայկ Խանումյանի հետ համաձայնության են եկել, և շարունակությունը հեռարձակվել է մարտի 13-ին:



Նույն՝ Գծապատկեր 46-ից երևում է, որ Նախագահի թեկնածուներից վճարովի եթերաժամանակից ամենաշատն օգտվել են (գրեթե հավասարապես) Հայկ Խանումյանը, Արայիկ Հարությունյանը, Մասիս Մայիլյանը՝ մոտենալով, բայց չգերազանցելով սահմանված առավելագույն 4800 վայրկյանը: Վճարովի եթերաժամանակից ընդհանրապես չեն օգտվել Մելսիկ Պողոսյանը, Դավիթ Բաբայանը, Բելլա Լալայանը և Զրիստին Բալայանը: Նախագահի թեկնածուներին վճարովի եթերաժամանակ տրամադրվել է յուրաքանչյուրին առավելագույնը 8 անգամ, ինչպես և սահմանված էր:

Նախագահի թեկնածուների լուսաբանումը




Նախագահական քարոզարշավին մասնակցող թեկնածուները, բացի իրենց հատկացված վճարովի և անվճար եթերաժամանակից, Արցախ TV-ի եթերում հիշատակվել են երեք հաղորդումներում՝ «Օր» (այդ թվում՝ «Օր Հավելված»), Вестник և «Խորհրդարանական ժամ»: Վերջին երկու հաղորդումներում նրանք հիշատակվել են գերազանցապես ինստիտուցիոնալ գործառույթներով: Այնուամենայնիվ, քարոզարշավից դուրս լուսաբանումը մեծ տոկոս չի կազմում, և, փաստացի, ինստիտուցիոնալ գործառույթներով հիշատակվել է միայն երեք թեկնածու՝ Աշոտ Ղուկասյանը, Հայկ Խանումյանը և Դավիթ Իշխանյանը, ընդհանուր՝ 928 վայրկյան: Նախագահի թեկնածուների լուսաբանման ընդհանուր պատկերը Արցախ TV-ի եթերում երևում է Գծապատկեր 47-ում (այս հաշվարկում ներառված չեն վճարովի ու անվճար եթերաժամանակների և բանավեճի տվյալները):

Նախագահի թեկնածուների բուն քարոզարշավը լուսաբանվել է միայն «Օր» լրատվականի թողարկումներում (յուրաքանչյուր օր լուսաբանվել է կամ Նախագահական կամ ԱԺ քարոզարշավը), քարոզարշավի բոլոր մյուս լուրերից առանձնացվել է հատուկ տարբերանշանով: Քարոզարշավի շրջանակում, ինչպես երևում է Գծապատկեր 47-ում, ամենաշատ լուսաբանված քաղաքական գործիչը

Աշոտ Ղուլյանն է, գրեթե հավասար եթերաժամանակ է տրամադրվել Մասիս Մայիլյանին, Արայիկ Չարությունյանին, Դավիթ Բաբայանին, Աշոտ Դադայանին, Յայկ Խանումյանին, Ռուսլան Իսրայելյանին, Վահան Բադասյանին: Մյուսներից զգալիորեն քիչ է լուսաբանվել Բելլա Լալայանը:


Նախագահի թեկնածուները լուսաբանվել են գերազանցապես չեզոք և դրական տոնայնությամբ, ինչը պայմանավորված է թեկնածուներին տրամադրված համապատասխանաբար անուղղակի և ուղղակի խոսքով: Բացասական տոնայնությամբ լուսաբանում մշտադիտարկման ընթացքում չի արձանագրվել: Դրական տոնայնությամբ ամենաշատ լուսաբանված թեկնածուն Աշոտ Ղուլյանն է, նրան գրեթե հավասարապես հաջորդում են Վահան Բադասյանը և Աշոտ Դադայանը: Չեզոք տոնայնությամբ ամենաշատը լուսաբանվել է Արայիկ Չարությունյանը, նրան գրեթե հավասարապես հաջորդում են Մասիս Մայիլյանը, Դավիթ Բաբայանը և Յայկ Խանումյանը (Գծապատկեր 48):



Բանավեճ


Քարոզարշավի վերջին օրը՝ մարտի 29-ին, Արցախ TV-ի եթերում կազմակերպվել է մեծ հեռուստաբանավեճ՝ նախագահի 14 թեկնածուներից 12-ի մասնակցությամբ: Թեկնածուներից Մասիս Մայիլյանը և Քրիստին Բալայանը հրաժարվել են մասնակցել բանավեճին, ինչի մասին դրա մեկնարկին տեղեկացրել է հաղորդավարը՝ մեջբերելով թեկնածուների հայտարարությունը: Բանավեճն ընթացել է՝ ընդհանուր առմամբ պահպանելով հավասար եթերաժամանակի նորմերը:

Գծապատկեր 49. Նախագահի թեկնածուներին տրամադրված ուղղակի խոսքը բանավեճի ժամանակ (վայրկյան)



Բանավեճին մասնակցող թեկնածուներից ուղղակի խոսքի հնարավորությունից ամենաշատն օգտվել է Արայիկ Զարուբյուկյանը՝ ավելի քան 800 վայրկյան, ամենաքիչը՝ Սերգեյ Ամիրյանը՝ մոտ 200 վայրկյան (Գծապատկեր 50): Այնուամենայնիվ, պետք է նշել, որ որևէ թեկնածուի իր համար սահմանված ուղղակի խոսքից ավելի եթերաժամանակ չի տրամադրվել, պարզապես որոշ թեկնածուներ լիարժեք չեն օգտագործել այդ ժամանակը: Հատկացված ուղղակի խոսքի ժամանակահատվածի այս տարբերությունը պայմանավորված է նաև նրանով, որ ըստ բանավեճի ձևաչափի՝ թեկնածուները միմյանց հարցեր տալու հնարավորություն ունեին, և բնականաբար՝ եթե հարցերն ավելի շատ մեկ թեկնածուի են ուղղվում, նրա եթերաժամանակը ավելի շատ է ստացվում:

Գծապատկեր 50. Նախագահի թեկնածուները բանավեճի ժամանակ՝ ըստ տոնայնության (վայրկյան)




Ընդհանուր առմամբ, բանավեճի շրջանակում գերակշռել է դրական (ուղղակի խոսքի հաշվին) և չեզոք տոնայնությունը: Բացասական տոնայնությամբ հիշատակվել են գերազանցապես Վահան Բադասյանը և Արայիկ Հարությունյանը, ինչպես նաև Վիտալի Բալասանյանը, Աշոտ Ղուլյանը, Բելլա Լալայանը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ բացասական տոնայնությունն ընդհանուրի մեջ մեծ տոկոս չի կազմել:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հեռուստաբանավեճը լավ կազմակերպված էր և ինքնին արդեն դրական երևույթ էր, թեև թեկնածուների միջև ռեալ բանավեճ այդպես էլ չծավալվեց, ավելին՝ որոշ թեկնածուներ լիարժեք չէին օգտագործում իրենց տրամադրված եթերաժամանակը, որոշներն էլ դա օգտագործում էին միմյանց դրական կողմերը մատնանշելու համար:


Ազգային ժողովում առաջադրված քաղաքական ուժերի լուսաբանումը

Ազգային ժողովում առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների քարոզարշավը լուսաբանվել է «Օր» լրատվականի և «Դեմ առ դեմ» հաղորդման շրջանակներում: Ազգային ժողովում առաջադրված որոշ թեկնածուներ հիշատակվել են «Խորհրդարանական ժամ» հաղորդման ընթացքում՝ ինստիտուցիոնալ գործառույթների լուսաբանմամբ, ինչպես նաև ոչ լրատվական հաղորդումներում (Գծապատկեր 51):



Ըստ այդմ, քարոզարշավի շրջանակում ամենաշատը լուսաբանվել է «Ազատ Հայրենիք – ԺՄԴ» դաշինքը, որին գրեթե հավասարապես հաջորդում են ԱԺԿ-ն, «Ազգային վերածնունդը», ՀՅԴ-ն և «Արդարությունը»: Ամենաքիչը լուսաբանվել է «Արցախի հեղափոխական կուսակցությունը» (Գծապատկեր 51):

Քարոզարշավի շրջանակում ԱԺ-ում առաջադրված քաղաքական ուժերը և նրանց թեկնածուները հիշատակվել են գերազանցապես դրական և չեզոք տոնայնությամբ, միայն երեք ուժ («Արդարություն», «Նոր Արցախ», «Միասնական հայրենիք») չնչին չափով հիշատակվել են նաև բացասական տոնայնությամբ: Դրական տոնայնությամբ ամենաշատը հիշատակվել է «Ազատ Հայրենիք – ԺՄԴ»-ն, նրան հաջորդում են ԱԺԿ-ն և ՀՅԴ-ն (Գծապատկեր 52):



«Դեմ առ դեմ»


Համապետական ընտրությունների քարոզարշավի ընթացքում դրական երևույթ էր Հանրային հեռուստաընկերության եթերում բանավեճի ձևաչափով «Դեմ առ դեմ» հաղորդման անցկացումը, որի շրջանակում եթեր է տրամադրվել ԱԺ ընտրություններին մասնակցող բոլոր 12 քաղաքական ուժերին: Այնուամենայնիվ, բանավեճի մասնակիցների վիճակահանությունը ի սկզբանե տեղի է ունեցել ըստ կուսակցությունների և դաշինքների. ըստ այդմ, քարոզարշավին մասնակցող դաշինքները, որոնք երկուսն էին («Ազատ Հայրենիք – ԲՄԴ» և «Նոր Արցախ») բանավիճել են միմյանց հետ, իսկ կուսակցությունների միջև արդեն վիճակահանություն է տեղի ունեցել:

Բացի այդ, հաղորդումը հեռարձակվել է ոչ թե ուղիղ եթերով, այլ մոնտաժված, ինչի արդյունքում, ըստ մեր ստացած ահազանգերի, առանձին դեպքերում եթեր չի գնացել բանավեճին մասնակցող թեկնածուների՝ երրորդ թեկնածուի հասցեին հնչեցրած մեղադրանքները:


Քարոզարշավի ընթացքում եթեր է հեռարձակվել «Դեմ առ դեմի» 7 հաղորդում, յուրաքանչյուր հաղորդման կրկնությունը եղել է հաջորդ օրը: Քարոզարշավի մեկնարկին՝ փետրվարի 27-ին, «Դեմ առ դեմի» տաղավարում հյուրընկալվել են ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը և Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի անդամ Գագիկ Խաչատրյանը, որոնք ներկայացրել են ընտրությունների անցկացման և լուսաբանման ընթացակարգերը:

Հաղորդման շրջանակում ամենաշատ հիշատակված քաղաքական ուժը «Ազատ Հայրենիք – ԲՄԴ» դաշինքն է, ամենաքիչը՝ «Նոր Արցախը»: Ընդ որում, ուշագրավ է, որ այս ուժերի ներկայացուցիչները բանավիճում էին հենց միմյանց հետ: Հաղորդման շրջանակում քաղաքական ուժերը հիշատակվել են գերազանցապես

դրական տոնայնությամբ, որն ապահովվել է նրանց հատկացված ուղղակի խոսքի հաշվին (Գծապատկեր 53):



Ընթացիկ հաղորդումներ



Բացի քարոզարշավից և ինստիտուցիոնալ լուսաբանումից, Ազգային ժողովում առաջադրված որոշ թեկնածուներ լուսաբանվել են նաև ոչ լրատվական բնույթի հաղորդումներում: Այսպես, նման բնույթի հաղորդումներում գերազանցապես բացասական տոնայնությամբ հիշատակվել է «Միասնական հայրենիք» կուսակցության առաջնորդ Սամվել Բաբայանը, որը թեև կուսակցության ցուցակում չկար, բայց քարոզարշավը հենց նա էր տանում: Մասնավորապես, մարտի 21-ին և 22-ին Արցախ TV-ի եթերում ցուցադրվել են «Ահաբեկչություն պետականության դեմ» և

«Մեր նախագահը» ֆիլմերը, որոնք պատմում են, համապատասխանաբար, Արկադի Ղուկասյանի դեմ իրականացված մահափորձի և Ղուկասյանի անցած ճանապարհի մասին: Երկու ֆիլմերում էլ Սամվել Բաբայանը հիշատակվել է բացասական համատեքստում:

Բացի այդ, «Ազատ Հայրենիք – ԶՄԴ» դաշինքով առաջադրված Լուսինե Ղարախանյանը երևացել է «Կրթարան» հաղորդման գովազդում, հաղորդումը, սակայն, եթեր չի գնացել: ՀՀԴ-ից առաջադրված մեկ այլ թեկնածու՝ Արմեն Սարգսյանը, կրկին չեզոք տոնայնությամբ հիշատակվել է «Անդրեյ Պետրոսյան 70» ֆիլմի շրջանակում (Գծապատկեր 54):

Այլ հեռուստաալիքներ

Հայաստանյան հեռուստաալիքներից Արցախի համապետական ընտրություններն առավել ակտիվ լուսաբանել է «5-րդ ալիքը»՝ միայն նախագահական ընտրությունների համատեքստում՝ ակնհայտ առավելություն տալով թեկնածուներից Վիտալի Բալասանյանին: Հաշվի առնելով թեկնածուների մեծ թիվը, բնական է, որ միևնույն ռեպորտաժում անհնար կլիներ բոլոր 14-ի լիարժեք լուսաբանումը: Ուստի միևնույն ռեպորտաժում անդրադարձ է կատարվել մի քանի թեկնածուի, բայց շատ հաճախ այդ թեկնածուները տարբեր օրերի կրկնվել են, իսկ որոշ թեկնածուներ ընդհանրապես չեն լուսաբանվել:

Այսպես, «5-րդ ալիքի» եթերում ամենաշատ լուսաբանված թեկնածուն Վիտալի Բալասանյանն է, որը ներառվել է ոչ միայն այլ թեկնածուների հետ ընդհանուր ռեպորտաժներում (13 ռեպորտաժ քարոզարշավներից, որտեղ մյուսների համեմատությամբ Բալասանյանին ավելի շատ ժամանակահատված է հատկացվել), այլև դրական տոնայնությամբ լուսաբանվել է անուղղակի խոսքում: Բալասանյանի մասին քարոզարշավի ընթացքում 2 անգամ ցուցադրվել է «Ասկերանի փամփուշտը» 17 րոպեանոց ֆիլմը և «Հաղթանակի ապրիլ» ֆիլմի անոնսը, որում խոսում է հենց Բալասանյանը: Վիտալի Բալասանյանը նաև հիշատակվել է որպես սոցիալական հիման վրա հաղթող հավանական թեկնածու, նրա քարոզարշավի մասին ռեպորտաժները հաճախ ուղեկցվել են վոքս-փոփերով, որտեղ քաղաքացիները նշում են, որ իրենց ձայնը տալու են Բալասանյանին:

Այս հեռուստաալիքի եթերում երկրորդ ամենաշատ լուսաբանված թեկնածուն Արայիկ Հարությունյանն է, որը հիմնականում հիշատակվել է չեզոք և դրական տոնայնությամբ (քարոզարշավից 7 ռեպորտաժ), նրան հաջորդում է Աշոտ Ղուկասյանը (6 ռեպորտաժ՝ չեզոք): Բուն քարոզարշավի լուսաբանման շրջանակում թեկնածուներից Մասիս Մայիլյանը հիշատակվել է 4 անգամ, Դավիթ Բաբայանը՝ 3, Զրիստին Բալայանը, Բելլա Լալայանը և Հայկ Խանումյանը՝ 2-ական անգամ, Դավիթ Իշխանյանը և Աշոտ Դադայանը՝ 1-ական անգամ:

Բացի այդ, «Հարցազրույցի» տաղավարում միջինը 30 րոպե տևողությամբ հարցազրույցներ են անցկացվել թեկնածուներից Արայիկ Հարությունյանի, Վիտալի Բալասանյանի, Դավիթ Իշխանյանի, Բելլա Լալայանի, Դավիթ Բաբայանի և Աշոտ Ղուկասյանի հետ: Հարցազրույցները տևել են մոտ 30 րոպե, բացառությամբ Բալասանյանի՝ մոտ 45 րոպե:

Մարտի 29-ին հեռուստաալիքը վերահեռարձակել է հեռուստաբանավեճը: Լռության օրը չի պահպանվել:

«Առաջին ալիքը» պաշտոնական քարոզարշավի ընթացքում դրան անդրադարձել է հիմնականում թեկնածուների հետ հարցազրույցի ձևաչափով (Նախագահի թեկնածուների հետ հարցազրույցները սկսվել էին պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ. փետրվարի 19-ից իրականացված մշտադիտարկումը ցույց է տվել, որ Նախքան քարոզարշավի մեկնարկը Հանրային տաղավար են հրավիրվել Դավիթ Բաբայանը և Դավիթ Իշխանյանը): Պաշտոնական քարոզարշավի ընթացքում Պետրոս Ղազարյանի տաղավարում հյուրընկալվել են Մասիս Մայիլյանը, Արայիկ Հարությունյանը, Վիտալի Բալասանյանը, Հայկ Խանումյանը, Վահան Բադասյանը, Աշոտ Ղուլյանը, Զրիստին Բալայանը, ինչպես նաև «Միասնական Հայրենիքի» առաջնորդ Սամվել Բաբայանը, որը ընտրական ցուցակով առաջադրված չէր:

Հանրայինը լուրերի իր գլխավոր թողարկումներում մի քանի անգամ անդրադարձել է քարոզարշավին՝ մեկ ռեպորտաժում ընդգրկելով մի քանի թեկնածուների: Ռեպորտաժները կրել են չեզոք բնույթ, բոլոր թեկնածուներին տրամադրվել է հավասար ժամանակահատված և տոնայնություն: Մշտադիտարկման ենթարկված ժամանակահատվածում լուրերի թողարկումներում Արայիկ Հարությունյանը հիշատակվել է 6 անգամ, Մասիս Մայիլյանը՝ 5, Վահան Բադասյանը՝ 4, Վիտալի Բալասանյանը և Դավիթ Բաբայանը՝ 3-ական, Դավիթ Իշխանյանը և Հայկ Խանումյանը՝ 2-ական, Սամվել Բաբայանը, Աշոտ Ղուլյանը, Ռուսլան Իսրայելյանը, Բելլա Լալայանը և Արտուր Օսիպյանը՝ 1-ական անգամ: Ուշագրավ է, որ թեև հեռուստաալիքը շեշտը դրել է հիմնականում Նախագահական մրցապայքարի վրա, ԱԺ-ում պայքարող թեկնածուներից լուսաբանվել են միայն Սամվել Բաբայանը և Արտուր Օսիպյանը:

Լռության օրը Հանրայինի եթերում պահպանվել է:

Մշտադիտարկման ենթարկված հեռուստաալիքներից **«Արմենիա TV»-ն** միակն է, որը հստակ տարբերակել է Նախագահական և խորհրդարանական ընտրությունների քարոզարշավները: Հեռուստաալիքը լուրերի մեկ հաղորդման շրջանակում մեկ ռեպորտաժով անդրադարձել է կամ Նախագահական, կամ խորհրդարանական մրցապայքարին: Ռեպորտաժներում թեկնածուներին հատկացվել է հավասար եթերաժամանակ և չեզոք տոնայնություն: Նախագահի 14 թեկնածուներից լուսաբանվել են 11-ը. Վիտալի Բալասանյանը, Դավիթ Բաբայանը հիշատակվել են 3-ական անգամ, Զրիստին Բալայանը, Արայիկ Հարությունյանը, Հայկ Խանումյանը, Դավիթ Իշխանյանը և Մասիս Մայիլյանը՝ 2-ական անգամ, Սերգեյ Ամիրյանը, Բելլա Լալայանը և Աշոտ Ղուլյանը՝ յուրաքանչյուրը մեկ անգամ: ԱԺ ընտրություններին մասնակցող 12 քաղաքական ուժերից բոլորը լուսաբանվել են (1 կամ 2 անգամ), բացի Արցախի հեղափոխական կուսակցությունից:

Բացի լրատվական թողարկումից, այլ ձևաչափերով ընտրություններին անդրադարձ չի կատարվել: Ուշագրավ է, սակայն, որ քարոզարշավի կեսից՝ մարտի 15-ից, լուսաբանումը դադարեցվել է, իսկ լռության օրը չի պահպանվել. մարտի 30-ի լուրերի թողարկմանը անդրադարձ է կատարվել Նախորդ օրը տեղի ունեցած հեռուստաբանավեճին

Մշտադիտարկման են ենթարկվել նաև «Կենտրոն» և «Շանթ» հեռուստաալիքները, որոնք Արցախի համապետական ընտրությունների քարոզարշավին որևէ կերպ չեն անդրադարձել: «Երկիր մեդիան» սահմանափակվել է ՀՀԴ թեկնածու Դավիթ Բաբայանի հիշատակմամբ՝ ՀՀԴ 130-ամյակի շրջանակում, ինչպես նաև Բելլա Լալայանի հետ մոտ 30 րոպեանոց հարցազրույց է անցկացվել, որի կրկնությունը ցուցադրվել է մեկ անգամ:

Առցանց լրատվամիջոցներ

Արցախում գործող պետական «Ազատ Արցախ» թերթի կայքը քարոզարշավի ընթացքում հարցազրույցներ է հրապարակել նախագահի թեկնածուներ Դավիթ Իշխանյանի, Բելլա Լալայանի, Մասիս Մայիլյանի, Զրիստին Բալայանի, Սերգեյ Ամիրյանի, Վիտալի Բալասանյանի, Դավիթ Բաբայանի և Արայիկ Հարությունյանի հետ: Բոլոր հարցազրույցները եղել են չեզոք և հավասարակշռված, հարցերը երբեմն կրկնվել են: Նույն ձևաչափով լուսաբանումից, սակայն, դուրս են մնացել նախագահի թեկնածուներ Հայկ Խանումյանը, Ռուսլան Իսրայելյանը, Վահան Բադալյանը, Աշոտ Ղուլյանը, Մելսիկ Պողոսյանը և Աշոտ Դադայանը: Ազգային ժողովում առաջադրված թեկնածուներին անդրադարձ չի եղել, քարոզարշավի ընթացքում ընտրությունների վերաբերյալ վերլուծական երկու հոդված է հրապարակվել, որտեղ անուններ չեն հիշատակվել: Լռության օրը չի խախտվել:

«Արցախպրեսս» կայքը գերազանցապես լուսաբանել է Արայիկ Հարությունյանի քարոզարշավը, պարբերաբար հրապարակել է նրա հաղթելու հավանականությունը ապացուցող սոցիալական և սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներ: Ընդհանուր առմամբ, Արայիկ Հարությունյանը և նրա գլխավորած «Ազատ Հայրենիք – ԶԽԴ» դաշինքը հիշատակվել են 22 հրապարակման մեջ՝ միայն դրական տոնայնությամբ: Լրատվականի Էջերում 8 անգամ հիշատակվել է Վիտալի Բալասանյանը՝ հիմնականում չեզոք և բացասական տոնայնությամբ: Մասիս Մայիլյանը հիշատակվել է 4 անգամ, որից երկուսը բացասական համատեքստում, երկուսը՝ հարցումների համատեքստում՝ որպես Արայիկ Հարությունյանից հետո հավակնորդ թեկնածու: Ավելի քիչ՝ 1-3 անգամ, հիշատակվել են Աշոտ Ղուլյանը, Դավիթ Իշխանյանը և ՀՀԴ-ն, Սամվել Բաբայանը և Արցախի ժողովրդավարական կուսակցությունը: Մյուս քաղաքական ուժերի քարոզարշավներին անդրադարձ չի եղել:

ՀՀԴ-ի պաշտոնական «Ապառաժ» թերթը լուսաբանել է բացառապես միայն ՀՀԴ թեկնածու Դավիթ Բաբայանի և Աժ-ում ներկայացված ՀՀԴ թեկնածուների քարոզարշավը: Թերթի Էջերում մեկ նյութ է վերահրապարակվել Սամվել Բաբայանի մասին՝ բացասական տոնայնությամբ, նույն Բաբայանի մասին ևս մեկ նյութ լուրի ժանրով է («Դատարանը մերժել է Սամվել Բաբայանի հայցն ընդդեմ ԱՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության»):

Առցանց տիրույթում գործող հայաստանյան լրատվամիջոցներից **1in.am-ը** բավականին ակտիվ լուսաբանել է Արցախի համապետական ընտրությունները՝ դրա համար բացելով առանձին խորագիր՝ «Արցախն ընտրում է»:

Այսպես, 1in.am-ը նախագահական ընտրություններին մասնակցող 14 թեկնածուներից հիշատակել է 8-ին, իսկ ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից՝ Սամվել Բաբայանին (որը չնայած ցուցակով առաջադրված չէր, բայց ինքն էր գլխավորում «Միասնական հայրենիքի» քարոզարշավը) և «Նոր Արցախ» դաշինքի առաջին համար Գրիգորի Սահակյանին:

Չնայած թեկնածուների բազմազանությանը, այնուամենայնիվ, այս լրատվամիջոցի էջերում նկատվում է թեկնածուներից Արայիկ Չարությունյանի լուսաբանման ակնհայտ գերապատվություն: Վերջինս լուսաբանվել է բոլոր ձևաչափերով՝ տեքստային և վիդեո հարցազրույցների տեսքով, պարբերաբար վերահրապարակվել են նրա ֆեյսբուքյան գրառումները և այդ հարթակում տեղադրված քարոզչական հոլովակները, տեսանյութեր են հրապարակվել քարոզարշավից, լրատվամիջոցի կողմից մի քանի հարցումներ են անցկացվել, որտեղ քաղաքացիները, որպես նախագահի թեկնածու, նշել են բացառապես Արայիկ Չարությունյանին: Ընդհանուր առմամբ, այս թեկնածուի մասնակցությամբ տեսանյութերի տևողությունը (քարոզարշավ և հարցազրույց) կազմել է ավելի քան 200 րոպե:

Երկրորդ ամենաշատ հիշատակված թեկնածուն Մասիս Մայիլյանն է, որին տեսանյութի ձևաչափով հատկացվել է մոտ 62 րոպե, որոշակի պարբերականությամբ հրապարակվել են նրա ֆեյսբուքյան գրառումները: Բացի այդ, 40 րոպեանոց հարցազրույց է հրապարակվել նրա շտաբի պետ Գրիգորի Սահակյանի հետ:

Չարցազրույցներ են հրապարակվել նաև Դավիթ Բաբայանի (58 րոպե), Սամվել Բաբայանի (45 րոպե), Վահան Բադասյանի (44 րոպե), Աշոտ Ղուլյանի (42 րոպե), Չայկ Խանումյանի (33 րոպե) և Ռուսլան Իսրայելյանի (28 րոպե) հետ:

Թեկնածուներից Վիտալի Բալասանյանի քարոզարշավը լուսաբանվել է քարոզարշավի միայն առաջին օրերին՝ երկու պաշտոնական հաղորդագրության տեսքով: Մարտի 1-ից սկսած Բալասանյանը հիշատակվել է միայն վերլուծական բնույթի հրապարակումներում և քաղաքագետների (այլ թեկնածուների) հետ հարցազրույցներում՝ հիմնականում բացասական տոնայնությամբ:

Մարտի 29-ին լրատվամիջոցն ուղիղ եթերով վերահեռարձակել է նախագահի թեկնածուների բանավեճը: Լռության օրը չի պահպանվել:

News.am-ը նույնպես Արցախի ընտրություններին անդրադարձել է գերազանցապես նախագահի համար մրցապայքարի համատեքստում: Բացառություն են կազմում Սամվել Բաբայանի վերաբերյալ մի քանի հիշատակումները, որոնք հիմնականում կապվում են նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանի հետ, մեկ անգամ էլ հիշատակվել է «Ազատ Չայրենիք – ԶՄԴ դաշինքը»:

Այս լրատվամիջոցն իր էջերում ակնհայտ գերապատվություն է տվել Վիտալի Բալասանյանին, որի մասին, առանձին բացառություններով, հիշատակումներ կան գրեթե ամեն օր, հաճախ օրական մի քանի լուրի տեսքով: Բալասանյանի քարոզարշավը լուսաբանվել է գերազանցապես նրա ֆեյսբուքյան գրառումների և պաշտոնական հաղորդագրությունների, ավելի քիչ՝ տպագիր մամուլի վերահրապարակումների տեսքով: Եղել են նաև հեղինակային նյութեր, հիմնականում տեքստային ձևաչափով, որոշ հրապարակումներ ուղեկցվել են քարոզարշավից կարճ

ռեպորտաժներով: Բացի այդ, Բալասանյանը հիշատակվել է նաև անուղղակի մեջբերումներում, երբ տարբեր շրջանակներ իրենց աջակցությունն են հայտնել այդ թեկնածուին: Զարոգարշավի ընթացքում News.am-ը նաև մի քանի հարցումներ է հրապարակել (որոշ դեպքերում ոչ արժանահավատ աղբյուրներից), ըստ որոնց, Վիտալի Բալասանյանը հաղթելու ամենամեծ շանսերն ունի: Փաստացի, Բալասանյանը լուսաբանվել է բացառապես դրական և չեզոք տոնայնությամբ:

Լրատվամիջոցի էջերում երկրորդ ամենաշատ լուսաբանված թեկնածուն Արայիկ Զարությունյանն է, որի քարոզարշավը լուսաբանվել է կրկին ֆեյսբուքյան գրառումները վերահրապարակելու տեսքով, ավելի քիչ՝ մամուլի հրապարակումներով: Զարությունյանը լուսաբանվել է գերազանցապես դրական և չեզոք տոնայնությամբ, բացառությամբ մեկ դեպքի, երբ հոդվածը եղել է բացասական տոնով:

Չգալիորեն ավելի քիչ լուսաբանվել են նաև Աշոտ Ղուլյանը, Դավիթ Բաբայանը և Դավիթ Իշխանյանը՝ կրկին ֆեյսբուքյան գրառումների վերահրապարակման տեքստով: Մյուս թեկնածուներից առանձին դեպքերում հիշատակվել են Ռուսլան Իսրայելյանը, իսկ ԱԺ քաղաքական ուժերից՝ Արցախի հեղափոխական կուսակցությունը:

Թեկնածուներից Մասիս Մայիլյանի քարոզարշավը, որպես այդպիսին, չի լուսաբանվել, քարոզարշավի վերջին օրերին մի քանի անգամ վերահրապարակվել են նրա ֆեյսբուքյան գրառումները՝ արտակարգ դրություն սահմանելու և ընտրությունները հետաձգելու վերաբերյալ: Մայիլյանն ավելի շատ հիշատակվել է մամուլի հրապարակումներում և անուղղակի խոսքում՝ հիմնականում բացասական և չեզոք տոնայնությամբ: Մեկ դեպքում արձանագրվել է ոչ պատշաճ բառապաշար «սորոսի վաստակներով» շրջապատված Մասիս Մայիլյանի նկատմամբ: Զարոգարշավի վերջին օրը News.am-ն ամբողջությամբ վերահեռարձակել է Արցախ TV-ով կազմակերպված հեռուստաբանավեճը, դրանից առանձին կտորներ մատուցելով նաև տեքստային տարբերակով, այդ թվում՝ լռության օրը:

Tert.am-ի էջերում ամենաշատ լուսաբանված թեկնածուն կրկին Վիտալի Բալասանյանն է, նրա քարոզարշավը ներկայացվել է ինչպես պաշտոնական հաղորդագրությունների, ֆեյսբուքյան գրառումների վերահրապարակումների, այնպես էլ հեղինակային նյութերի և հարցազրույցների, տպագիր մամուլի հրապարակումների տեսքով (ընդհանուր առմամբ, 24 հրապարակում): Տեքստային հրապարակումներին հիմնականում կցված է եղել նաև տեսանյութ: Զարոգարշավը լուսաբանող որոշ տեսանյութերում ներառվել են նաև քաղաքացիների հետ հարցումներ, որոնցում հարցման մասնակիցները նախապատվություն են տալիս հենց Վիտալի Բալասանյանին:

Երկրորդ ամենաշատ լուսաբանված թեկնածուն՝ կրկին դրական և չեզոք տոնայնությամբ, Արայիկ Զարությունյանն է, որի քարոզարշավը լուսաբանվել է գերազանցապես ֆեյսբուքյան գրառումների և պաշտոնական հաղորդագրությունների վերահրապարակումների տեսքով (7 հրապարակում, որից 1-ը հարցազրույց):

Մյուս թեկնածուներից Դավիթ Իշխանյանը, Աշոտ Ղուլյանը հիշատակվել են 2-ական անգամ (դրական և չեզոք), Մասիս Մայիլյանը՝ կրկին 2 անգամ՝ բացասական և չեզոք տոնայնությամբ: Ռուսլան Իսրայելյանը մեկ անգամ հիշատակվել է ընտրությունները հետաձգելու համատեքստում:

Tert.am-ն ամբողջությամբ վերահեռարձակել է Արցախի TV-ի կազմակերպած մեծ բանավեճը, այնուհետև առանձին 6 նյութով ներկայացրել է դրա որոշ դրվագներ: Լռության օրը չի պահպանվել:

«**Հրապարակ**» օրաթերթի կայքը Արցախի ընտրություններին անդրադարձել է գերազանցապես վերլուծական հոդվածներով, որոնք առավելապես ուղղված են եղել Մասիս Մայիլյան-Սամվել Բաբայան տանդեմի դեմ: Մասնավորապես, Մասիս Մայիլյանը բացասական տոնայնությամբ հիշատակվել է 22, Սամվել Բաբայանը՝ 13 հրապարակման մեջ (ընդ որում, վերլուծականների մեծ մասի հեղինակը Վահրամ Աթանեսյանն է): Այս թեկնածուների քարոզարշավին անդրադարձ չի եղել, բացառությամբ՝ երբ քարոզարշավի վերջին օրերին հրապարակվել է Սամվել Բաբայանի մոտ 20 թույլանոց հարցազրույցը:

Թեկնածուներից ամենաշատը լուսաբանվել է Վիտալի Բալասանյանի քարոզարշավը՝ հիմնականում նրա գրասենյակի կողմից տարածված պաշտոնական հաղորդագրությունների տեսքով, ավելի քիչ լուսաբանվել է Արայիկ Չարությունյանը՝ հիմնականում ֆեյսբուքյան գրառումների վերահրապարակումների տեսքով:

Վիտալի Բալասանյանը վերլուծական հոդվածներում (կամ անուղղակի խոսքում) դրական լույսի տակ է լուսաբանվել 7, իսկ Արայիկ Չարությունյանը՝ 8 հրապարակման մեջ: Մյուս թեկնածուներից Չայկ Խանումյանը հիշատակվել է 2 անգամ (չեզոք), Վահան Բադասյանը մեկ անգամ (բացասական), մեկ անգամ հրապարակվել է Աշոտ Ղուլյանի ֆեյսբուքյան գրառումը՝ ընտրություններին մասնակցելու կոչով, մեկ անգամ էլ հիշատակվել է Ռուսլան Իսրայելյանը՝ ընտրությունները հետաձգելու կոչով և նրան միացած թեկնածուները (Մասիս Մայիլյանը, Սերգեյ Ամիրյանը, Զրիստին Բալայանը և Աշոտ Դադայան): Մեկ հրապարակմամբ էլ ներկայացվել են Նախագահի թեկնածուների հայտարարագրերը՝ բացառությամբ Զրիստին Բալայանի: Լռության օրը չի պահպանվել:

Մշտադիտարկման ենթարկված առցանց լրատվամիջոցներից Արցախի ընտրություններին ամենաքիչն անդրադարձել է «**Հայկական ժամանակի**» կայքը: Քարոզարշավի ողջ ընթացքում կայքում Արայիկ Չարությունյանը հիշատակվել է 4 անգամ (որից 1-ը հարցազրույցի, 3-ը ֆեյսբուքյան գրառումների վերահրապարակման տեսքով), մեկ անգամ տարածվել է «Ազատ Հայրենիք – ԶՄԴ» դաշինքի պաշտոնական հաղորդագրությունը, 2 անգամ հիշատակվել է Մասիս Մայիլյանը՝ կրկին պաշտոնական հաղորդագրությունների տեսքով, մեկական անգամ հարցազրույց է անցկացվել թեկնածուներ Չայկ Խանումյանի, Վահան Բադասյանի և Դավիթ Բաբայանի հետ: Լռության օրը «ՀԺ»-ն հրապարակել է Մայիլյանի բացատրությունը՝ ինչու չի մասնակցել բանավեճին:

Այսպիսով, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ օգտվելով իրավական բացից՝ համապետական ընտրություններին մասնակցող թեկնածուները քարոզարշավի իրականացման հիմնական շեշտը դրել են ոչ թե իրավական

կարգավորումներին ենթարկվող արցախյան վերգետնյա հեռուստաալիքների վրա, այլ այդ կարգավորումներին չենթարկվող առցանց լրատվամիջոցների և հայաստանյան հեռուստաալիքների վրա: Արդյունքում, թեև Արցախ TV-ն հիմնականում պահպանել է հավասար լուսաբանման կանոնները, այնուամենայնիվ, արցախյան լսարանի վրա որոշակի ազդեցություն է թողել առցանց տիրույթում և հայաստանյան հեռուստաալիքներում թեկնածուների անհավասար լուսաբանումը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Դիտորդական առաքելության իրականացման ընթացքում բացահայտվել կամ հայտնաբերվել են ընտրական օրենսդրության բազմաթիվ խախտումներ: Այն խախտումների մասով, որոնք առերևույթ պարունակել են Արցախի քրեական օրենսգրքով արգելված արարքներ, առաքելությունը հանրապետության դատախազություն է ներկայացրել հանցագործության մասին հաղորդումներ: Այդ արարքների ճշող մեծամասնությունը վերաբերում էր ընտրակաշառքին, վարչական ռեսուրսի չարաշահմանը և քվեարկության գաղտնիության խախտմանը: Ընդհանուր առմամբ, «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» Արցախի Հանրապետության դատախազություն է ներկայացրել 20 հաղորդում, որոնք կազմել են բոլոր եղանակներով ստացված դեպքերի 25 տոկոսը:

Ներկայացված հաղորդումները վերաբերում են ԱՀ քրեական օրենսգրքի՝

- 147.1 հոդվածով (Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը (ըստ էության՝ վարչական ռեսուրսը չարաշահելը)) - 4 դրվագ
- 148 հոդվածով (Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը) - 1 դրվագ
- 150 հոդվածի 1-ին մասով (Ընտրողների ցուցակները հրապարակելու կարգը խախտելը) - 1 դրվագ
- 150 հոդվածի 2-րդ մասով (Ընտրողների ցուցակները կազմելու կարգը խախտելը) - 1 դրվագ
- 151 հոդվածով (Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը) - 5 դրվագ
- 152 հոդված (Քվեարկության գաղտնիությունը խախտելը) - 6 դրվագ
- 154 հոդված (Ընտրողներին կաշառք տալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը) - 8 դրվագ
- 269 հոդված (Խուլիզանությունը) - 1 դրվագ

Ներկայացված 20 հաղորդումներից 6-ով հարուցվել են քրեական գործեր (ընդ որում, դրանցից 4-ով հարուցումը մերժվել էր, ապա դատախազություն բողոքարկվելու արդյունքում որոշումը փոխվել էր): Սույն զեկույցը պատրաստելու պահի դրությամբ գործերից միայն երկուսն են, որ դեռևս քննության փուլում են, իսկ գործերից մեկը միավորվել է այդ երկուսից մեկին: Նման պատկերը արդյունք է

քրեական հետախուզության ու քննչական մարմինների, ինչպես նաև՝ մայիս ամսից հետո դատախազության կողմից քրեական գործերը տրամաբանական ավարտին հասցնելու կամքի առերևույթ բացակայության, ինչպես նաև քրեական օրենսգրքում քվեարկության գաղտնիության խնդրահարույց սահմանման:

Մասնավորապես, դեռևս քննության փուլում է Մարտունու քաղաքապետի կողմից մարտի 18-ին (1-ին փուլի նախընտրական քարոզչության ժամանակ) ընտրություններին մասնակցող «Հեղափոխական» կուսակցության թեկնածուների և կողմակիցների՝ Մարտունի քաղաք մուտքը խոչընդոտելու դեպքով քննվող գործը (Քրեական օրենսգրքի 147.1 հոդվածով): Թեև, հարկ է նկատել, որ քաղաքապետ Հայկ Սարգսյանը ընդունել է իր մեղքը և հրաժարական տվել:

Քննվող մյուս գործը վերաբերում է սույն զեկույցում նկարագրված ընտրողների ցուցակները վարելու և հրապարակելու կարգի խախտման դեպքերին (մեր երկու հաղորդումներով գործերը միավորվել էին): Այստեղ ևս հարկ է նկատել, որ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության պետ Ջիվան Ղահրամանյանը ազատվել է պաշտոնից և ուղարկվել կադրերի ռեզերվ:

Ընդ որում, 2020 թվականի հուլիսին Արցախի Ազգային ժողովը ընդունեց համաներման մասին օրենք: Թեև օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ մասով գրեթե բոլոր ընտրական հանցագործությունների մասով բացառություն է սահմանված (այսինքն, համաներումը դրանց վրա չի տարածվում), սակայն դրանց թվում չկան 147.1 հոդվածը (որը, ըստ էության, վարչական ռեսուրսի չարաշահումը արգելող հոդվածն է և վերաբերում է Մարտունիի քաղաքապետի դեպքին), 150 հոդվածը (որը վերաբերում է ընտրողների ցուցակները վարելուն ու հրապարակելուն) և 152 հոդվածը (որը վերաբերում է քվեարկության գաղտնիությանը):

Վերոգրյալի համադրությամբ առաքելությունը գալիս է այն եզրահանգման, որ Արցախի Հանրապետության թե՛ քաղաքական իշխանությունները և թե՛ իրավապահները չունեցան բավարար կամք և ցանկություն ընտրական հանցագործություններ գործած անձանց քրեական պատասխանատվության կանչելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտարկելով Արցախի Հանրապետության համապետական ընտրությունները՝ ԻԶՄ դիտորդական առաքելությունն արձանագրեց մի իրավիճակ, որում կային որոշակի դրական կողմեր՝ համեմատած նախորդ ընտրությունների հետ, բայց և ընտրական գործընթացի բազմաթիվ թերացումներ, խախտումներ և ոչ բավարար քաղաքական կամք՝ դրանց վերացման համար: Դիտորդների կողմից արձանագրված խախտումների հիմնական մասն իրենց բնույթով կարող էր ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

- Առաքելության կողմից հայտնաբերված քվեասենյակների կահավորման հետ կապված լուրջ թերությունների մի մասը պայմանավորված էր շենքային պայմաններով, բայց զգալի մասը դիտարկվում էր որպես հանձնաժողովի անդամների թույլ կարողության արդյունք:

- Դիտարկված 49 տեղամասերից 13-ը բոլոր պարամետրերով գնահատվեցին որպես լիովին անմատչելի, իսկ մյուսների պարագայում տարբեր բնույթի խնդիրներ են եղել: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար, չնայած տեղամասերը ապահովված էին խոշորացույցով, սակայն բրայլան կաղապար այդպես էլ չտրամադրվեց:

- 48 տեղամասերում ներդրված տեսանկարահանումը ավելացրեց գործընթացի թափանցիկությունը, դիտորդական առաքելությունների համար անգամ հնարավորություն ստեղծեց առցանց ռեժիմով դիտարկել ընտրությունների ընթացքը և վերահսկողության լրացուցիչ մեխանիզմ հանդիսացավ:

- 1-ին փուլում սահմանված ժամկետից հետո դիտորդական կազմակերպություններ հավատարմագրելու փաստը և 2-րդ փուլում նոր դիտորդների հավատարմագրման ու հավատարմագրված դիտորդների ցանկերում լրացումներ, փոփոխություններ իրականացնելու նախաձեռնությունը փաստում են այն մասին, որ ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատական չէ պահպանելու ընտրական օրենսդրության պահանջները և ընթացիկ իրավիճակային խնդիրները վեր է դասում դրանցից: ԿԸՀ-ի կողմից դիտորդական առաքելություն իրականացնող կառույցներին տրամադրված դատարկ բեյջերի արդյունքում չհավատարմագրված դիտորդների առկայությունը տեղամասերում խորացնում է այս մտահոգությունը:

- Ընտրողների ստորագրած ցուցակին ծանոթանալու և/կամ չքվեարկած ընտրողների մասին տեղեկություններն այլ անձանց փոխանցելու, մեկից ավելի անձանց քվեարկության սենյակ մուտք գործելու, քվեաթերթիկները քվեախցիկից դուրս լրացնելու կամ ծալելու, ընտրողների կողմից սեփական քվեաթերթիկը լուսանկարելու, քվեարկության մասին բարձրաձայնելու բազմաթիվ դեպքերը փաստում են ընտրությունների վերահսկման և քաղաքացիների ազատ կամարտահայտման վրա որոշ ուժերի կողմից ունեցած ազդեցության մասին:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից գործառույթների վիճակահանություն չիրականացնելը կամ մասամբ իրականացնելն իր մեջ ռիսկեր է պարունակում թե՛ գործընթացի ոչ թափանցիկ իրականացման տեսանկյունից և թե՛ հանձնաժողովների կողմից օրենքի պահանջը անտեսելու տեսանկյունից: Հանձնաժողովի նախագահի կողմից իր գործառույթներին պատշաճ չտիրապետելու, այլ անձանց կողմից նախագահի գործառույթներն իրենց վրա վերցնելու, տեղամասերում խախտումների ուղղությամբ քայլեր չձեռնարկելու, խախտումների առնչությամբ արձանագրություններ չկազմելու դեպքերը փաստում են հանձնաժողովների չկայացվածության մասին:

- Տարածքային ընտրական հանձնաժողովներ բերված փաստաթղթերի փաթեթավորման հետ կապված բազմաթիվ խնդիրները, այդ հանձնաժողովներում իրենց գործառույթներին ոչ պատշաճ տիրապետելը և բազմաթիվ խախտումների հայտնաբերումը ևս խոսում են բոլոր մակարդակներում հանձնաժողովների կարողությունների բացերի մասին: Այդուհանդերձ, ընտրական հանձնաժողովները, հիմնականում, պատրաստակամ էին աշխատել դիտորդների հետ, և չիմացության արդյունքում թույլ տրված բազմաթիվ թերություններ դիտորդների առաջարկությամբ վերացվում էին:

- Արցախի ոստիկանությունը պատշաճ միջոցառումներ չէր ձեռնարկում նախընտրական փուլում և քվեարկության օրը կատարված հանցագործությունների կանխման ու բացահայտման ուղղությամբ, ավելին՝ հատկապես երկրորդ փուլում ոստիկաններն իրենք չէին պահպանում Ընտրական օրենսգրքի պահանջները՝ առանց նախագահի հրավերի բազմաթիվ անգամներ ու «անդադար» գտնվելով տեղամասում:

- Քվեարկության օրը քարոզչանյութերի, պաստառների առկայությունը տեղամասերի շրջակայքում վկայում է դրանց հեռացման հստակ մեխանիզմների կամ կամքի բացակայության մասին:

Հարկ ենք համարում ընդգծել, որ թեև ԻԶՄ-ն չի իրականացրել երկարաժամկետ դիտորդական առաքելություն, սակայն այն իրականացվել է մեր գործընկեր «Ականատես» դիտորդական դաշինքի կողմից, որը մտահոգություններ է բարձրացրել վարչական ռեսուրսի օգտագործման և քարոզչությանը զուգորդվող բարեգործության հետ կապված: ԻԶՄ-ն ևս բազմաթիվ զուլցակիցներից ահազանգեր է ստացել քարոզչության հետ զուգորդվող կամ թեկնածուների հետ կապակցված բարեգործության մասին: Հաճախ այդ բարեգործությունն իրականացվել է շինանյութի տրամադրման և այլ պետական ծրագրերի շրջանակում, սակայն բնակիչներին մատուցվել է որպես թեկնածուներից Արայիկ Հարությունյանի կողմից տրվող աջակցություն: Այս հանգամանքները հիմք են տալիս մտածելու, որ ընտրողների կամքի վրա եղել է ընտրական օրենսդրությամբ արգելված ներգործություն:

Այս մտահոգություններն էապես ավելանում են ընտրությունների օրն արձանագրված քվեարկության գաղտնիությունը խախտելու բազմաթիվ դեպքերի ֆոնին: Ընդ որում, հաշվի առնելով, որ այդ խախտումները կրում էին լատենտային

բնույթ և, որպես կանոն, եզակի դեպքերում են նկատվել դիտորդների կողմից, կարող ենք ենթադրել, որ դրանք եղել են էապես ավելի շատ, քան արձանագրվել է, հետևաբար, այդ առումով ամբողջական պատկերը ճշգրիտ գնահատել հնարավոր չէ: Ըստ այդմ, հնարավոր չէ նաև ճշգրիտ թվային գնահատական տալ, թե Արցախի Հանրապետության ընտրողների քանի տոկոսը չի կարողացել քվեարկության խցիկներում իրականացնել իրական կամարտահայտում՝ կաշկանդված լինելով ստացած բարեգործությամբ կամ իրենց նկատմամբ կիրառված վարչական լծակներով:

Այսպիսով, կարելի է ասել, որ Արցախի համապետական ընտրություններն անցել են մրցակցային պայմաններում, սակայն այդ մրցակցության արդարության չափը չէր համապատասխանում ժողովրդավարական հասարակությունում ընտրություններին ներկայացվող պահանջներին: Թեպետ, ողջունելի է, որ Արցախի հանրության (այդ թվում՝ մասնագիտական հանրության) շրջանում գերակշռում է այն ընկալումը, որ 2020 թվականի ընտրություններն էապես ավելի ժողովրդավար էին, քան 2015 թվականի Ազգային ժողովի և 2012 թվականի Նախագահական ընտրությունները: Ի տարբերություն Նախորդ ընտրությունների, այս անգամ թե՛ ընտրական սուբյեկտները և թե՛ դիտորդները կասկածի տակ չէին դնում այն, որ տեղամասերում լցոնումներ և քվեարկության արդյունքների կեղծիքներ չեն եղել:

Ընտրությունների թե՛ Նախընտրական ժամանակահատվածում, թե՛ առաջին և երկրորդ փուլում եղել են խախտումներ, որոնց ամբողջականությունը կարող էր էական ազդեցություն ունենալ թե՛ Ազգային ժողովի և թե՛ հանրապետության Նախագահի քվեարկության արդյունքների վրա:

Թեպետ ընտրությունների թափանցիկության ապահովման ուղղությամբ Արցախի Հանրապետության իշխանությունները իրական և էական ջանքեր էին գործադրել, սակայն առերևույթ է ընտրախախտումների դեմ պայքարի (դրանց Նախականիման, բացահայտման ու մեղավորներին պատասխանատվության կանչելու) քաղաքական կամքի բացակայությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՅ ընտրական օրենսգրքում հստակորեն սահմանել տեղամաս, տեղամասային կենտրոն, քվեասենյակ հասկացությունները՝ հատուկ շեշտադրելով, թե ընտրական հանձնաժողովները որ գործառույթները որտեղ են իրականացնելու:

- Ապահովել ընտրական գործընթացների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նախատեսել լրացուցիչ միջոցներ տեղամասերի և քվեարկության կարգի լիարժեք մատչելիության համար՝ նվազագույնի հասցնելով այլ անձի օգնությամբ քվեարկության ներկայանալու ու քվեարկելու կարիքը և ապահովելով անձի ինքնուրույն և գաղտնի քվեարկության իրավունքը: Օրենսդրությամբ ամրագրել քվեարկության կազմակերպումն ու անցկացումը միայն մատչելի տեղամասային կենտրոններում իրականացնելու պահանջը: Տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար ապահովել ինքնուրույն քվեարկելու հնարավորությունը՝ տեղամասերին տրամադրելով բրայլյան տառատեսակի կադապարներ:

- Մշակել հստակ մեխանիզմներ դիտորդների հավատարմագրման ձևաչափի և ժամկետների վերաբերյալ՝ բացառելով Ընտրական օրենսգրքի խախտումները և չհավատարմագրված դիտորդների առկայությունը տեղամասերում:

- Ներդնել ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքեր, որոնք կնվազեցնեն կրկնաքվեարկության, այլ անձի փոխարեն քվեարկելու ռիսկերը, ինչպես նաև տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայության հնարավորությունը:

- Ընտրությունների օրը ընտրական գործընթացի թափանցիկությունն ու հանրային վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով քվեասենյակներում տեսանկարահանող սարքերի առկայությունն ամրագրել օրենքով և ապահովել բոլոր տեղամասերի համար:

- Ապահովել հստակ մեխանիզմներ լռության օրը և քվեարկության օրը նախընտրական պաստառների, քարոզչանյութերի հեռացման համար: Սահմանել խիստ վերահսկողություն և պատժամիջոցներ:

- Ապահովել տեղամասային ընտրական հանձնաժողովների շարունակական որակյալ վերապատրաստումը: Հանձնաժողովի անդամների համար յուրաքանչյուր ընտրությունից առաջ պարտադիր իրականացնել թեստավորում: Ապահովել հանձնաժողովների վերապատրաստման դասընթացների և թեստավորման անցկացման նյութերի և վայրի մատչելիությունը:

- Բարձրացնել Տարածքային ընտրական հանձնաժողովների գիտելիքների և կարողությունների մակարդակը, վերջիններիս աշխատանքը դարձնել առավել թափանցիկ՝ ամրագրելով հանձնաժողովի նստավայրը տեսախցիկներով կահավորելու, քվեարկության օրը և դիմումների քննության ժամանակ հանձնաժողովի բոլոր գործողություններն առցանց հեռարձակելու պահանջը:

- Ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար՝ թեկնածուներ, հանձնաժողովներ, դիտորդներ, ՉԼՄ ներկայացուցիչներ, վստահված անձինք, ոստիկաններ, նախապատրաստել և տպագրել մատչելի ուղեցույցներ, իրականացնել վերապատրաստումներ և իրազեկման միջոցառումներ:

- Մշակել իրավական կարգավորումներ, որոնք կբացառեն անհավասար քարոզչական հնարավորություններն Արցախում հեռարձակվող հայաստանյան հեռուստաալիքների միջոցով:

- Նախընտրական քարոզչության շրջանում սոցիալական ցանցերում և առցանց տիրույթում ատելության խոսքը բացառելու նպատակով սահմանել համապատասխան կարգավորումներ:

- Փոփոխել քրեական օրենսգրքի՝ քվեարկության գաղտնիության հետ կապված հոդվածը՝ այն համապատասխանեցնելով Արցախի ընտրական օրենսգրքում նկարագրված ռիսկերին:

- Ապահովել ընտրական հանցագործությունների արդյունավետ պրոակտիվ բացահայտումը և այդպիսի հանցագործություններ կատարած անձանց քրեական հետապնդումը:

- Օրենսդրորեն ներմուծել քվեարկության ծրարների ինստիտուտը՝ որպես քվեարկության գաղտնիության ապահովման մեխանիզմ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կազմակերպությունը քաղաքական, կրոնական, արհեստակցական նպատակներ չի հետապնդում, որևէ կուսակցությանը չի հարում:

Կազմակերպության սկզբունքներն են՝ օրինականությունը, հրապարակայնությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը և հաշվետվողականությունը:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ԱԶ քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ԱԶ օրենքով, իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ:

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» հիմնադրվել է 2019 թվականի հուլիսի 23-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության մի շարք անդամների կողմից:

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» նպատակ ունի նպաստել Արցախում քաղաքացիական հասարակության զարգացմանը և ժողովրդավարության ամրապնդմանը:

2019 թվականի սեպտեմբերի 8-ին «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրված դրամաշնորհով դիտորդական առաքելություն է իրականացրել Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

2020 թվականին ՀՀ վարչապետի 192-Ա որոշմամբ ստեղծված մրցույթային հանձնաժողովի որոշմամբ «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը» դրամաշնորհ է ստացել Արցախի համապետական ընտրությունները դիտարկելու համար: Մասնավորապես, կազմակերպությունը որպես դրամաշնորհ ստացել է 60 մլն դրամ ընտրությունների առաջին փուլի համար, իսկ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի դեպքում՝ 20 մլն դրամ:

Բացի ընտրությունների դիտորդական առաքելությունները, «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակն» Արցախում իրականացրել է նաև հանրային քննարկումներ, մեդիագրագիտության թրեյնինգներ: Կազմակերպության անդամները Արցախում պարբերական հանդիպումներ են ունեցել հանրապետության տարբեր հասարակական ու քաղաքական գործիչների և քաղաքացիական ակտիվիստների հետ: